

Հայ նոր գրականություն



ՐԱՖՖԻ

(1835 – 1888)

Ռաֆֆին հզոր իմացականությամբ և բացառիկ երևակայությամբ օժտված վիպասան է, 1870-80-ականների արևելահայ գրականության կենտրոնական դեմքն ու հայկական ռոմանտիզմի խոշորագույն ներկայացուցիչը: Նա նոր որակ հաղորդեց հայ վիպագրության ազգային ավանդներին՝ աննախադեպ հարստացնելով և բյուրեղացնելով նաև աշխարհաբարը: Այս մեծ գրողը գրականության ու մամուլի միջոցով արթնացրեց հայոց ազգային ինքնագիտակցությունը, ժողովրդին ոգևորեց նախնիների հերոսական օրինակով, նպաստեց նրա հավաքական ամբողջությանը՝ միաժամանակ ձևավորելով գեղագիտական բարձր ճաշակ:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան) ծնվել է 1835 թ. Պարսկաստանի հայաշատ Սալմաստ գավառի Փայաջուկ գյուղում՝ ազնվականի գերդաստանում: Հայրը՝ Մելիք-Միրզան, գյուղի ժառանգական մելիքն էր, որը հիմնականում զբաղվում էր կարմիր գույնով ներկված բամբակե հաստ կտավի առևտրով և հայտնի անուն էր գործարար շրջաններում՝ Սալմաստից մինչև Խոյ, Թավրիզից մինչև Թիֆլիս: Նա մի շատ համակրելի, նահապետական մարդ էր՝ բնությունից օժտված գեղեցիկ հատկանիշներով. աշխատասեր էր ու ազնիվ, հյուրասեր և արդարադատ, կարծես հաշտարար դատավոր լիներ գյուղացիների միջև ծագած զանազան վեճերը լուծելիս: Նույնքան համակրելի էր «քաղաքավարի և բարեպաշտ» մայրը՝ Ջեյրան խանումը, որի ժրաջան հոգացողության շնորհիվ տունը միշտ լիքն էր ամեն տեսակ բարիքներով: Ամուսինները հաշտ ու խաղաղ մեծացնում էին իրենց 14 զավակներին՝ 5 տղաներին և 9 աղջիկներին:

Հակոբը՝ ապագա հանրաճանաչ գրող Ռաֆֆին, տղաներից ավագն էր: Նրա մանկությունն ու պատանեկությունն անցել են հայրենի գյուղի սքանչելի բնության գրկում. արձակ սիզավետ դաշտեր, երկնասույզ լեռներ, կարկաչաձայն, բայց անհանգիստ ու «խենթուկ» Ձոլա գետակ... Բնաշխարհի անկրկնելի գույներն ընդմիշտ պիտի ուղեկցեին Արևելքի զավակին. նա հաճախ էր ասում, որ «ծաղիկների բուրմունքը, նրանց անուշ հոտը մարդու ճաշակն ու հոտոտելիքը ազնվացնում են», և Թիֆլիսի իր բնակարանը, ինչպես հետագայում հիշում է Ալեքսանդր Շիրվանզադեն, «շրջապատել էր բնության գեղեցիկ և գույնզգույն ժապավենով, որ մի առանձին հրապույր էր տալիս նրան արտաքուստ»:

Առևտրական խաչուղիներում գտնվող հայրական հսկա տան՝ հյուրանոց հիշեցնող մի հատվածում անպակաս էին այցելուները. նրանք սովորական մարդիկ էին կամ պաշտոնյաներ, տեղացի կամ օտար առևտրականներ, ճանապարհորդներ, նաև հոգևորականներ: Այնտեղ երկու անգամ հյուրընկալվել է հայոց ամենասիրելի կաթողիկոսներից մեկը՝ Խրիմյան Հայրիկը: Ասպնջական տան դռները միշտ բաց էին նաև պարզապես չքավորների ու կարոտյալների առջև: «Օր չէր անցնի, որ նրանց տանը մի քանի հյուրեր չլինեին, օր չէր անցնի, որ մի քանի չքավորներ և թշվառներ չկերակրվեին նրանց տան թոնրից դուրս եկած թաժա (թարմ) հացից, կաթն ու թանապուրից կամ, ինչպես իրենք էին ասում, Աստծու տվածից: Ահա մի այդպիսի շեն տանից էր Ռաֆֆին»,- հիշում է ընտանիքի մտերիմներից մեկը:

Ի բնե ընդունակ, հետաքրքրասեր ու փայլուն հիշողություն ունեցող Հակոբը

հենց իրենց տանն է առաջին անգամ լսել զարմանահրաշ պատմություններ աշխարհի տարբեր երկրների ու մարդկանց, չարի և բարու մասին, վառ երևակայությունը նրան տարել է հեռուներ՝ ազատ ու լույս եզերքներ: «Մանուկ Ռաֆֆին,- պատմում է կենսագիրը,- իրենց տան հյուրերին էլ շատ անգամ ունկնդիր կլիներ՝ նրանց խոսակցությունը լսելու համար, և երկար նրանց կնայեր՝ նկատելու համար, թե նրանք ինչ տիպեր ունեն, որպեսզի նրանց նկարի թղթի վրա»: Երեխան լսած զրույցների տպավորությունների տակ ոչ միայն նկարել է դիմանկարներ, ծաղիկներ ու գծագրել է աշխարհագրական քարտեզներ, այլև իր համար մանկական խաղեր է հորինել կամ զվարճալիքներ որոնել, հատուկ սեր է ունեցել հրացան գործածելու և ձի հեծնելու նկատմամբ: 8 տարեկանում ճիպոտից պարսատիկի նմանվող կրակիչ է հորինել ու միջատներ սպանել, քիչ հետո սնամեջ եղեգն է դարձել նրա հրացանի փողը, իսկ սիսեռները կամ կավից շինված գնդիկները՝ կրակող գնդակները... Բացի այդ՝ ձմռան երկար գիշերներին նա ստիպել է տատին կամ մորը, որ իրեն շարունակ պատմեն «հրեշների զրույցներ, կախարդական հմայքներ, առասպելներ ու հեքիաթներ», և «դիվական արշավանքների պատմությունները սրել են նրա միտքը»:

Հակոբը նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի դպրոցում՝ մի վանեցի ուսուցչի մոտ, որը հայտնի էր նրանով, որ իր աշակերտներին պատժում էր ոչ թե «երկաթե գավազանով», այլ... ապտակահարությամբ: Ռաֆֆին հետագայում իր մտերիմներից մեկին պատմել է ուսուցչից մի քանի անգամ հանդիմանական ապտակներ ստանալու մասին, որովհետև Սաղմոսի, Ավետարանի դասերը չափազանց բարդ էին, անհասկանալի ու անհետաքրքիր: Բայց համարձակ ու արդարամիտ պատանին երբեմն ըմբոստացել է ուսուցչի կոպիտ վարմունքի դեմ, անգամ գոռացել է նրա վրա և դիմադրել, երբ տեսել է իր ընկերներին սոսկալի ապտակահարության ենթարկվելիս: Ուսուցչի զարմացական հարցին, թե նա ինչու է խառնվում, չէ՞ որ ինքը նրան չի պատժում, հետևել է տրամաբանական պատասխանը. «Միևնույն է, մի օր էլ ինձ այդ օրը կգցես»:

Հակոբը դպրոց կոչվող այդ տանջարանում սովորում է մոտավորապես հինգ տարի (1847-1852), և ուսման հարգն իմացող հայրը, նկատելով որդու բացառիկ ընդունակությունները, անհագ սերը դեպի կրթությունն ու անընդհատ ասելով, թե իր «Հակոբի հատը (նմանը) ողջ Սալմաստում չկա», նրան տեղափոխում է Թիֆլիս և հանձնում մի շատ լավ ուսուցչի՝ Կարապետ Բելախյանցի գիշերօթիկ դպրոցը: Հեռատես Մելիք-Միրզան չէր սխալվել. նոր ուսուցիչն անմիջապես նկատում է 12-ամյա «նիհար, թուլակազմ, հիվանդոտ աչքերով» պատանու զարմանալի ընդունակությունն ու արտակարգ աշխատա-

սիրությունը և նրան ուսուցանում է հատուկ ջանադրությամբ: Այնտեղ սովորելու ընթացքում նա տիրապետում է գրաբարին, կարդում Մխիթարյան միաբանության հայրերի թարգմանած անտիկ գրականության դասական հեղինակների՝ Հոմերոսի, Սոֆոկլեսի, Վերգիլիոսի, Միլտոնի, Ֆենելոնի և ուրիշների երկերը: Հակոբն արդեն 17 տարեկան էր, երբ ավարտում է դպրոցը: Հետաքրքրական է, որ հետագա տասնամյակների ընթացքում չի ընդհատվել ուսուցիչ-աշակերտ մարդկայնորեն հասկանալի ջերմ կապը. առաջինը հպարտացել է տաղանդաշատ նախկին սանի հռչակով, իսկ երկրորդը միշտ պահպանել է հարգանքն ու երախտագիտության խոր զգացումը: Պատմում են, որ արդեն հանրաճանաչ գրող՝ Ռաֆֆին Թիֆլիսում օգնել է իրեն կատակով միշտ Հակովբ ասող երբեմնի ուսուցչին՝ Կարապետ Բելախյանցին. նրան յուրաքանչյուր կիրակի որդիական սիրով ընդունել է իր տանը, հյուրասիրել՝ ամեն անգամ զառամյալ ուսուցչի ձեռքի ափի մեջ սեղմելով թղթադրամ:

1852 թ. Հակոբն ընդունվում է Թիֆլիսի արքունական գիմնազիան ու այնտեղ սովորելու տարիներին ընթերցում է Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Եղիշեի պատմությունները, որոնք հայրենասիրական կայծեր են բորբոքում վառվռուն պատանու հոգում. նա որոշում է հետագա իր ամբողջ կյանքն անմնացորդ նվիրել հարազատ ժողովրդի բարօրությանը: Գիմնազիայում բավարար չափով սովորում է ռուսաց լեզուն, բնագրով կարդում է Իվան Տուրգենևի երկերը, թարգմանաբար ծանոթանում ֆրանսիացի Վիկտոր Հյուգոյի վիպագրությանը, սկսում կատարել գրական առաջին նախափորձերը՝ ուրվագծելով պարսկահայերի տխուր կյանքը պատկերող «Սալբի» վեպի դիպաշարն ու կերպարներին:

Հակոբի հորեղբայրները, սակայն, չէին ուզում, որ նա շարունակի կրթությունը գիմնազիայում, և իրենց եղբորից պահանջում էին Փայաջուկ վերադարձնել նրան, որպեսզի միասին շարունակեն ընտանիքի առևտրական գործը: Արդեն ծերացող ու վատառողջ Մելիք-Միրզան, չկամենալով փչացնել հարաբերությունները եղբայրների հետ, գիմնազիայի լրիվ դասընթացը չավարտած որդուն խնդրում է բռնել տունդարձի ճամփան:

1856-ին 21-ամյա երիտասարդն արդեն Փայաջուկում էր: Նա մի կողմից զբաղվում էր հոր առևտրական գործերով կամ սիրած դաշտային աշխատանքներով, մյուս կողմից էլ բարեկարգում էր հայրական տունն ու իր առանձնասենյակը: Ինչպես հետագայում հիշում է Ռաֆֆու զարմիկը, այդ սենյակն այնքան գեղեցիկ էր, որ շարունակ գրավում էր բազմաթիվ ճամփորդների ուշադրութ-

յունը, ավելին՝ դրա տպագրված նկարը տարածվում էր առանձին բացիկներով՝ որպես արվեստի նմուշ. «Պատերը և առաստաղը ամբողջովին ծածկված էին յուղաներկ գունագեղ և ոսկեզօծ զարդանկարներով, գլխավորապես ծաղիկներ և թռչուններ՝ արևելյան ճաշակով: Պատերի մեջ զետեղված էին փոքրիկ պահարաններ, դեպի արևելք նայող մի խոշոր պատուհան՝ երկու ծանր փեղկերով, ապակիները՝ գունավոր, մանր կտրատված և մոզաիկ դասավորությամբ, որոնք առավոտյան արեգակի շողերից բազմերանգ գույներ էին արտացոլում դեպի ներս և պար բռնում գորգերի ու պատերի գույների հետ: Առաստաղի կենտրոնում ագուցված էր (ամրացված էր) խոշոր հայելի. իսկ արևմտյան պատի վրա՝ ծաղկանկարների մեջ, աչքի էր ընկնում մի **քնար՝ շողարձակ արևով**»: Արվեստի և լույսի այդ խորհրդանիշը՝ քնարը, ինչպես հավաստում էր երկարակյաց Ջեյրան խանումը, Հակոբն էր գծագրել իր ձեռքով, տան վերանորոգումն էլ կատարվել էր նրա անմիջական հսկողությամբ ու ցուցումներով: Նկարելու իր բնատուր ձիրքն ու զարգացած ճաշակը Ռաֆֆին քիչ հետո պիտի ներհյուսեր գեղարվեստական գրականությանը՝ ստեղծելով մի գեղանկարչական վիպագրություն, որը հասու է շատ քչերին: Համոզվելու համար հիշենք հեղինակի՝ «Սամվել» վեպում պատկերած համանուն հերոսի սենյակը. «Հատակը պատած էր նախշուն, բրդեղեն օթոցներով (գորգ-փռոցներով). անկյուններում դրած էին՝ զանազան ձևով, ծանր և թեթև նիզակներ, տեգեր, գեղարդներ, ջիդաներ (երկաթե սլաքներ), աշտեներ և երկաթյա ահագին լախտեր (գնդաձև մահակներ)՝ բոլորը գեղեցիկ քանդակներով զարդարված, բոլորը ոսկեհուռ դրվագներով ագուցած»: Ի դեպ, Ռաֆֆու երկերում «զենքերով սենյակի» նկարագրությունը հաճախադեպ է. այդպիսին է Ռուստամի սենյակը «Սալբի»-ում, Դավիթ-Բեկինը՝ համանուն վեպում և այդպես շարունակ:

Հայրական տանն անցկացրած տարիներին Ռաֆֆին բնավ կտրված չէր արտաքին աշխարհից. նա շարունակաբար ստանում էր նոր տպագրված գրականություն, հայերեն հրատարակվող բազմաթիվ պարբերականներ: Առևտրական գործերի բերումով հաճախ էր կատարում զանազան ուղևորություններ թե՛ Պարսկաստանի, թե՛ Արևմտյան Հայաստանի և թե՛ արևելահայ հատվածի տարբեր մասերով: Դրանք կենսական վիթխարի նյութ էին տալիս ապագա վիպասանին: Ի վերջո հայ գրականության մեջ նա պիտի դառնար այն եզակիներից մեկը, որի ստեղծագործությունը ներառում է երեք եզերքների գեղարվեստական կենսապատումը:

1857-ին 22-ամյա երիտասարդը, անցնելով թուրք-պարսկական սահմանը, հասնում է Վան, իջևանում նշանավոր Այգեստան թաղամասում: Այցելում է

Վարագա վանք, Ժառանգավորաց դպրոց, զրուցում Խրիմյան Հայրիկի հետ: Դրանից հետո նավակով գնում է Աղթամարա վանք և լռիկ նստելով Բզնունյաց ծովակի (Վանա լճի) ափերի մոտ՝ գրում հայ քնարերգության գեղեցիկ երգերից մեկը՝ «Ամեն տեղ տիրած խորին լռություն» բանաստեղծությունը, որը հայտնի է «Ձայն տուր, ո՛վ ծովակ» անունով.

Ձայն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես.
Ողբակից լինել չկամի՞ս դժբախտիս.
Շարժեցե՛ք, զեփյուռք, ալիքը վեր-վեր,
Խառնեք արտասուքս այս ջրերիս հետ:

Վերադառնալով Սալմաստ՝ Ռաֆֆին Աղթամար կղզու վանական մթնոլորտից իր ստացած տպավորություններն ամբողջացնում է «Աղթամարա վանքը» ակնարկում, որը հիշյալ բանաստեղծության հետ միասին 1860-ին տպագրվում է «Հյուսիսափայլ» ամսագրում:

Ուղևորությունների ընթացքում տեսած տխուր, սրտաճմլիկ պատկերները մինչև հոգու խորքը ցնցում են նրբազգաց երիտասարդին: «Բոլոր մեր ճանապարհորդության միջոցում,- գրում է նա,- ես տխուր էի: Ես անցնում էի մի երկրից, ուր ամեն մի սար, ամեն մի դաշտ, ամեն մի գետ, ամեն մի փլատակ հարուցանում էին իմ մտքի մեջ տխուր պատմական հիշատակներ»: Այդ ընթացքում Հակոբը հավաքում էր նաև հնագիտական բավական արժեքավոր առարկաներ՝ «հազվագյուտ հին դրամներ, նուրբ քանդակներ, նկարներ, հին ձեռագրեր»: Շփվում էր հարևան տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների հետ, հրաշալի զինված՝ կարող էր համարձակորեն բանակցել քուրդ ավազակախմբերի ցեղապետների հետ: Ռաֆֆու զարմիկը պատմում է, որ հորեղբայրն Ուրմիայից մեն-մենակ մի անգամ վերադառնալիս է լինում Սալմաստ՝ ձիու թամբին կապած տոպրակում ահագին գումարով: Ճանապարհի կեսին իջևանում է մի գյուղի ծանոթ ընտանիքում, որտեղ հյուրընկալվել էին նաև քուրդ աղաներ՝ իրենց զինված ավազակներով: Զրույցի ընթացքում քրդերից մեկը հետաքրքրվում է, թե նա ինչպես է այդպես համարձակորեն միայնակ ճամփորդում այս վտանգավոր վայրերով, ինչ կանի, եթե վրան հարձակվեն: Այդ ժամանակ Ռաֆֆին սառնասրտորեն ձեռքը տանում է դեպի գրպանը, այնտեղից հանում ատրճանակը և այն ուղղելով խոսակցին՝ ասում. «Ա՛յ, սրանով կպատասխանեմ»: Այդ արարքը զորեղ տպավորություն է թողնում բոլորի վրա, և քրդերը բարեկամանում են նրա հետ:

Հիշատակելի է նաև պարսիկների կողմից 12-ամյա մի հայուհու առևանգելու

պատմությունը, երբ երիտասարդ Ռաֆֆին, չդիմանալով թշվառ գեղջկուհու մոր սրտմաշուկ մրմունջներին, գիշերով մեն-մենակ մտնում է դենպետի՝ պարսից կրոնապետի տուն և նրան համոզելով՝ աղջկան հետ է բերում ու հանձնում մորը: Իսկ Պարսկաստանում չափազանց դժվար էր այդպիսի հանդուգն քայլ կատարելը. նման դեպքերում հաջողության հասնել հնարավոր էր միայն հավաքական ուժով և թեմակալների նախաձեռնությամբ, այն էլ՝ հազար ու մի դիմումներով:

Ռաֆֆին ամուսնացել է 31 տարեկանում. նրա կինը՝ Աննա Հյուրմուզը, քրիստոնյա ասորուհի էր: Այդ ամուսնության պատմությունը Ռաֆֆու արկածախնդրություններից թերևս ամենառոմանտիկն էր: Հակոբն իր ապագա կնոջն առաջին անգամ տեսել ու նրա երգը լսել է Պարսկաստանի Ուրմիա քաղաքի ամերիկյան միսիոներների (քրիստոնյա քարոզիչների) դպրոցի շրջանավարտների հանդեսին, ուր հրավիրված էր ինքը: Երիտասարդն անմիջապես հրապուրվում է «բարձրահասակ և գեղեցիկ կազմվածքով, դեմքով սպիտակ ու ժպտադեմ» օրիորդով և որոշում է գտնել նրա ծնողներին ու խնդրել նրա ձեռքը: Հարցուփորձի ժամանակ նրան, սակայն, զգուշացնում են, որ կողքի գյուղաքաղաքում ապրող աղջկա հայրն իր դստերն արդեն խոսք է տվել մի բժշկի: Երիտասարդը չի հուսահատվում և գնում է նրանց տուն: Աննայի հայրը լսել էր Հակոբի մասին, գիտեր նրանց հարգված գերդաստանը և նրան ընդունում է հավուրպատշաճի: Լուրը հասնում է Աննայի նշանածին, և նա էլ, վրեժխնդրությունից դրդված, ընկերներով բարձրանում է մոտակա տան կտուրը՝ այնտեղից պատժելու ախոյանին: Եվ ահա, երբ Հակոբը դուրս է գալիս նրանց տնից, մի հսկայական քար ընկնում է մեջքին ու նրան ուշաթափ գետնին փռում: Իմանալով այդ մասին՝ Աննայի հայրը նրան տանում է իր տուն, և ընտանիքը մի քանի օր Հակոբին խնամում է: Ապաքինված Ռաֆֆին հայտնում է իր նպատակը և ստանում Աննայի ու նրա հոր համաձայնությունը: Իսկ հայերի և ասորիների միջև խնամիությունը սովորական բան էր:

Աննան ամուսնուն հավատարիմ ու արժանավոր կին էր: Լինելով շատ ընդունակ և ուշիմ՝ նա Ռաֆֆուց սովորում է հայերեն, երկու տղաներին՝ Արամին ու Արշակին (Եսթեր դուստրը, ցավոք, վախճանվում է ծաղիկ հասակում), տալիս է խորապես հայեցի դաստիարակություն: Բացի այդ՝ հնարավորինս քաջալերում է իր տաղանդաշատ ամուսնուն ստեղծագործական կյանքում և նրա գործերը բարձր գնահատում: «Ռաֆֆին կքաշվեր իր սենյակը և կգրեր բոլորովին ամփոփված,- հիշում է Աննան:- Այդ ատեն թույլ չէի տար, որ որևէ մեկն ընդմիջեր զինքը: Ես ինքս աշխատասենյակին դուռը բանալու ատեն չափազանց

զգուշություն կընեի և ոտնաձայն իսկ չէի հաներ»: Ռաֆֆու վաղաժամ մահից հետո գրական շրջաններին արդեն հայտնի Աննա Ռաֆֆին, որն ամուսնու վախճանվելուց հետո ապրեց ևս 32 տարի, ամենայն ուշադրությամբ խնամում է նրա թանկագին գրքերն ու ձեռագրերը և դրանց մի մասը հնարավորինս տպագրում: Այս կնոջը հաջողվում է նաև իր փխրուն ուսերին կրել որդիների ապագայի բեռը. նա տեղափոխվում է Անգլիա և Լոնդոնում նրանց տալիս պատշաճ կրթության:

Հոր մահից հետո սնանկացումից փրկվելու Ռաֆֆու բոլոր փորձերն անցնում են ապարդյուն: Արվեստագետի ներաշխարհ ունեցող երիտասարդը երբեք էլ գլուխ չի հանել, իր խոսքով՝ «առևտրական լաբիրինթական հաշիվներից»: «Մեր անիրավ պահանջատերերը ինձ միջոց չեն տալիս, որ ես մի տեղ դադար առնեմ, հալածված որսի պես ինձ վռնդում են մի տեղից մի այլ տեղ,- խոստովանել է նա:- Նրանք ինձ պարտքերի մեջ խեղդել են, իմ բոլոր ապրուստի աղբյուրները փակել են: Աշխարհս կատարյալ դժոխք է, դժոխք: Բայց, այնուամենայնիվ, ես շատ չեմ զարմանում, թող ինչ ուզում են, անեն, սակայն ես իմ գրչից չեմ բաժանվի: Ես նրան կզորեղացնեմ և թույլ չեմ տա, որ նա ժանգոտի, չպետք է վիատվել աշխարհիս պատահարներից, պետք է գործել»: Եվ նախկին մեծահարուստի որդին, որ նյութապես միշտ եղել էր ապահովված, ապրել ճոխությունների մեջ, ընկնում է ծանր դրության մեջ: «Բախտի անհաստատ ճախարակի շրջանը երբեմն մինչև աստղերը բարձրացնում է մարդին, իսկ երբեմն մինչև անդունդն ի խոր գլորում»,- այսպիսի պատկերավոր համեմատությամբ է Ռաֆֆին իր տխուր մտորումը փոխանցում մանկության ընկերոջը:

Երիտասարդը հայացքը հառել էր դեպի արևելահայ գրական-մշակութային կենտրոնը՝ Թիֆլիս՝ մի ներքին բնազդով կարծես զգալով, որ այնտեղ իրեն վերապահված է չափազանց կարևոր դեր՝ «հարստացնել ազգի աղքատ գրականությունը»:

1868-ից Ռաֆֆին որոշ ընդհատումներով ապրում է Թիֆլիսում՝ սկզբից չքավորության մեջ. ստիպված նույնիսկ աշխատանքի է մտնում պատրաստի հագուստեղենի խանութում՝ որպես գործակատար, հետո՝ հաշվապահ: Բայց երբ 1871-ին ծանոթանում է Ռուսաստանում ու Եվրոպայում փայլուն կրթություն ստացած նշանավոր հրապարակախոս և քաղաքագետ Գրիգոր Արծրունու հետ ու մեկ տարի հետո սկսում աշխատակցել նրա «Մշակ» լրագրին, անապահով վիճակը վերանում է, և նա սկսում է ազատ շունչ քաշել: Նախնական շրջանում գրում էր բանաստեղծություններ, բայց Արծրունին արդեն նկատել էր Ռաֆֆու՝ արձակ շարադրելու ձիրքը և խրախուսում է իր աշխատակցին՝

հրապարակ հանելու «կենդանի նկարագիրներ»: «Մշակ»-ի էջերում երևում են «Ռաֆֆի» ստորագրությամբ ակնարկաշար և համառոտ նամակներ: Ի դեպ, ***Ռաֆֆի*** գրական կեղծանվան շուրջ հայտնվել են զանազան կարծիքներ, որոնցից ամենահավանականն այն է, որ այդ բառն արաբերենից է փոխանցվել պարսկերենին և նշանակում է բարձրագույն, վսեմ:

Թավրիզի Արամյան դպրոցի հոգաբարձուների խորհուրդը Ռաֆֆուն 1875-ին առաջարկում է լավ պայմաններով ստանձնել հայոց պատմության ուսուցչի պաշտոնը. հրավերն ընդունվում է սիրով: Նոր աշխատանքն ու խաղաղ մթնոլորտը բարերար ազդեցություն են ունենում առողջությամբ առանձնապես չփայլող Ռաֆֆու վրա: Ինքն էլ բարեխիղճ և օրինակելի ուսուցիչ էր: Նա դատապարտում էր ֆիզիկական պատիժները, կրթության այն բոլոր ձևերը, որոնք խոչընդոտում էին աշակերտների ինքնուրույնությանն ու համարձակությանը: Կարծում էր, որ իսկական ուսուցիչը չպետք է զլանա իր գիտելիքների հարուստ պաշարը փոխանցել աշակերտներին, պիտի զարգացնի ինքնուրույն ու ազատ մտածողություն, առաջնորդվի հավասարության սկզբունքով: Ռաֆֆին համոզված էր, որ եթե աշակերտը սիրում ու հարգում է ուսուցչին, ապա «միշտ կպատրաստե յուր դասերը՝ ուսուցչի դժգոհության առիթ չտալու համար»: Նա ուներ հումորի նուրբ զգացում: Ահա ինչ է պատմել Արամյան դպրոցի սաներից մեկը. «Ռաֆֆին մեր դասատուն էր. չէր ծեծում, բայց սիրում էր երբեմն մեր մազերից քաշել, որը, այնուամենայնիվ, ցավ էր պատճառում: Մի օր որոշեցինք մեր մազերը խուզել և հետևյալ օրը բոլորս շատ կարճ խուզած մազերով նստած էինք դասարանում և սպասում էինք նրան. ուրախ էինք, որ այլևս չի կարող մեր մազերից քաշել: Ներս մտավ Ռաֆֆին և նկատելով մեր խորամանկ խաղը՝ քմծիծաղ տվեց, ապա կանչեց ընկերներիցս մեկին՝ դաս պատասխանելու. սա մի քանի տեղ սխալվեց և կմկմաց: Ռաֆֆին հանգստությամբ ձեռքը մեկնեց, բռնեց նրա ականջից և ասաց. «Դե՛, հիմա էլ գնացե՛ք, ականջնե՛րդ խուզեք»»:

Համարձակ էր Ռաֆֆին, խիստ արդարադատ: Նա ըմբոստանում է տեղի հայ հանրության հոգսերի նկատմամբ վերնախավերի անտարբերության, զանազան ապօրինությունների, օրիորդաց դպրոց բացելու խոստման ու այն չիրագործելու դեմ և «Մշակ»-ում տպագրում է համարձակ թղթակցություններ: Դրանք և մինչ այդ հրապարակված «Հարեմ» վեպը շարժում են հետամնաց ուժերի կատաղի զայրույթը. քրեական որոշ տիպեր նույնիսկ ներխուժում են դպրոց՝ փորձելով Ռաֆֆուն բռնությամբ հեռացնել դասարանից, բայց հանդիպում են ամրակազմ մտավորականի դիմադրությանն ու չեն հաջողում: Քիչ հետո էլ վտանգվում է անգամ նրա կյանքը: Անհանգիստ ու տագնապալի այդ հեռավոր օրերի մասին

հյուսվում են ճշմարտանման զրույցներ, որոնցից ամենաազդեցիկը ընտանեկան շրջանակում պատմվող հետևյալ դեպքն է. Ռաֆֆու թշնամիները վարձում են Քարամ անունով մի ավազակապետի և հանձնարարում ոչնչացնել նրան: Գիշերվա ուշ ժամի մտնելով ուսուցչի սենյակը՝ ավազակը նրան տեսնում է աշխատելիս՝ կուրծքը հենած գրասեղանին: Մտքերի մեջ խորասուզված Ռաֆֆին չի էլ զգում, որ թիկունքին կանգնած է դահիճը՝ ձեռքը սրի կոթին, և դիտում է իր աշխատանքը, լսում գրչի խզխզոցը: Հանկարծ ավազակի ձեռքը ծանրանում է ապագա զոհի ուսին, և գրական մշակն անակնկալի գալով տեսնում է նրան: «Ինձ ուղարկել են քեզ սպանելու, բայց ես գործ չունեմ այն մարդկանց հետ, որոնք սրի փոխարեն գրիչ են շարժում. վեր կաց, շտապիր, քեզ քաղաքից հեռացնեմ»,- ասում է Քարամը: Հուշագիրը՝ Ռաֆֆու հարազատ եղբոր՝ Տիգրանի որդի Սողոմոնը, այս մասին պատմելով, գրում է, որ ինքը չի կարող պնդել դեպքի իսկությունը. այն կարելի է համարել ավանդություն, բայց սարկաստիկ ծաղրով ավելացնում է. «Քարամի և Թավրիզի հայ աղաների բարոյական ըմբռնումների միջև անդունդ կա»:

Դրանից հետո Ռաֆֆին մի միջոց ուսուցչություն է անում Ագուլիսում (գյուղ՝ ներկայիս Նախիջևանում), իսկ 1879-ի կեսերից վերջնականապես հաստատվում է Թիֆլիսում ու ամբողջովին նվիրվում ստեղծագործական աշխատանքի՝ գրելով կարևոր մի շարք երկեր: Շիրվանզադեն իր «Կյանքի բովից» (կյանքի հնոցից՝ փորձից) հուշագրության մեջ հետաքրքրական բազմաթիվ տեղեկություններ է թողել Ռաֆֆու՝ թիֆլիսյան այդ շրջանի գործունեության մասին: «Նա զգայուն սրտի և վառ երևակայության տեր մարդ էր, հայ ազգի վշտերի ու դառնությունների ամենաեռանդուն թարգմանը և նրա նվիրական գաղափարների ամենատաղանդավոր արտահայտիչը,- գրում է Շիրվանզադեն և շատ շոշափելի ներկայացնում Ռաֆֆու դիմանկարը:- Այդ սեղանի քով նստած էր մի մարդ՝ բավական մեծ գլխով, լայն, բարձր, կնճռոտ և քունքերի մոտ դուրս ցցված ճակատով, թանձր ու սև ունքերով, խիտ բեղերով ու կարճլիկ մորուքով, ուր հազիվ նշմարվում էին մի քանի սպիտակ թելեր: Նրա դեմքի գույնը թուխ էր, արտահայտությունը առաջին անգամ տեսնողի համար՝ անհյուրընկալ, շրթունքները՝ սեղմված, աչքերը՝ հիվանդոտ»: Առասպելական աշխատասիրության տեր այդ մարդը համոզված էր, որ տաղանդը երեք քառորդով աշխատասիրություն է. օրական միջին հաշվով աշխատում էր տասնվեց ժամ, երբեմն ավելի: Եվ այդ զբաղվածության ու զանազան հոգսերի մեջ նա միշտ մնացել է կարեկից ու անանձնական: «Քանի՜-քանի՜ անգործ ուսուցիչներ են դիմել նրան և օգնություն ստացել, քանի՜-քանի՜ ամոթխած մուրացկաններ, որ չէին ուզում

բացարձակ ողորմություն հավաքել, շատ անգամ նրան են դիմել և նպաստ ստացել, քանի՛-քանի՛ հիվանդ տաճկահայերի (արևմտահայերի) է օգնել և քանիսի ճանապարհածախսն է հոգացել: Եվ այդ բոլորը անում էր գաղտնի, առանց յուր արածի մասին փողեր փչելու և թմբուկներ զարկելու»,- դարձյալ վերհիշում է Շիրվանզադեն:

Այսպիսին էր Ռաֆֆի մարդը, որն իր մահկանացուն կնքեց 54 տարեկանում ուղեղի կաթվածից. դա 1888 թվականի գարնանն էր: Թաղման օրը՝ ապրիլի 29-ին, սաստիկ անձրև էր, որը, իհարկե, չի խանգարել նրա երկրպագուների վիթխարի բազմությանը, ինչը, ըստ Հովհաննես Թումանյանի, հարգանք էր ոչ միայն Ռաֆֆու անվանը, այլև գրականությանը, և հենց նա էր այն գրողը, որը բարձրացրեց հայ գրականության հեղինակությունը:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ռաֆֆին բազմաժանր գրող է. գրել է բանաստեղծություններ, պոեմներ, պատմվածքներ, վեպեր ու վիպակներ, ուղեգրություններ, զանազան ակնարկներ, հրապարակագրական բազմաբնույթ էջեր՝ դրանցով դառնալով հայ ամենաբեղմնավոր գրողներից մեկը: Նա միայն 1870-ականների սկզբներին արդեն այնքան պատրաստ գործեր ուներ, որ մտադրվել էր դրանք հրատարակել տասը հատորով՝ «Փունջ» ընդհանուր վերնագրով: 1874-ին լույս են տեսնում դրա միայն առաջին և երկրորդ հատորները, իսկ մյուսները հանգամանքների բերումով չեն տպագրվում:

Ռաֆֆու ստեղծագործական կյանքի առաջին շրջանն սկսվում է պոեզիայով. գրական երախայրիքը ռոմանտիկական սիրուն նվիրված «Խորհրդական ճրագ» բանաստեղծությունն է, որը գրվել է 1856-ին: Աբովյանի պես նա ևս բանաստեղծական առանձին ներշնչումներ ունեցել է ստեղծագործական կյանքի տարբեր շրջաններում. դրանք արտահայտվել են նաև վեպերում, ասենք՝ «Սամվել»-ում, ուր արձակին երբեմն միահյուսվում է քնարական չափածոն, որը մի առանձին գրավչություն է հաղորդում վիպական ժանրին: Որպես բանաստեղծ՝ Ռաֆֆին հանդես եկավ 1850-60-ականներին, երբ գրական ասպարեզում էին Ալիշանը, Նալբանդյանը, Պատկանյանն ու Պեշիկթաշլյանը: Նրա բանաստեղծությունները հիմնականում ամփոփված են «Փունջ»-ի առաջին հատորում: Դրանց բնորոշ են երկու հիմնական մոտիվներ՝ ազգային ռոմանտիզմն ու կյանքի արատավոր կողմերի քննադատությունը:

Ռաֆֆու ուժը, սակայն, չափածոյի մեջ չէր. գրողը շատ շուտ զգաց այդ

հանգամանքն ու անցավ վիպագրությանը: Նա դեռևս Թիֆլիսում ուսանելու շրջանում սկսում է աշխատել իր առաջին երկերից մեկի՝ «Սալբի» եռահատոր վեպի վրա, որի նյութն առնված էր պարսկահայերի կյանքից: Երիտասարդ հեղինակն այն սկսել էր գրել գրաբար, բայց երբ 1858 թ. լույս են տեսնում «Հյուսիսափայլ»-ը և Աբովյանի «Վերք Հայաստանին...», վեպի լեզուն փոխում է աշխարհաբարի: «Սալբի»-ին հեղինակի կենդանության օրոք ամբողջությամբ չի հրատարակվել (միայն առանձին հատվածներ են տպագրվել զանազան պարբերականներում). առաջին հատորը լույս է ընծայվել Ռաֆֆու վախճանից բավական հետո՝ 1911-ին, Աննա Ռաֆֆու ջանքերով ու նրա առաջաբանով: Վեպի երկրորդ և երրորդ հատորների ճակատագիրը մինչ օրս մնում է անհայտ: Վիպասանն իր այս գործը խորին մեծարանքով ձոնել է «Անմահ Մ. Նալբանդյանի միշտ օրհնյալ հիշատակին»: Վեպում նա առաջադրել է այն ճիշտ գաղափարը, որ ազգի պահպանության համար կարևորագույնը հայրենասիրությունն է, «ազգային սերն» ու «ազգության գաղափարը», և ով չի ճանաչում ու չի սիրում իր ժողովրդին, «վերջանում է մարդ լինելուց»:

Ռաֆֆու այս շրջանի երկերից են նաև պատմվածքները («Գեղեցիկ Վարթիկը», «Անբախտ Հռիփսիմեն», «Կուսագրություն», «Մի օրավար հող» և այլն), որոնց մեջ հեղինակը գեղարվեստական ցնցող պատկերներով ներկայացրել է սոցիալական անարդարության զոհերի, ճակատագրից հալածվածների, կյանքի հատակն ընկած մարդկանց դժնդակ կացությունը պարսկախանական բռնատիրության շրջանում: Այդ պատմվածքներն ուշարժան էին նաև այն առումով, որ Աբովյանից հետո ուրիշ ոչ մի հայ նշանավոր հեղինակ (Նալբանդյան, Պռոշյան, Աղայան) չէր դիմել արձակի փոքր ձևերին, և Ռաֆֆին շարունակեց այդ կարևոր ավանդը:

Ըստ վիպասանի՝ զարգացած երկրներում ունևոր խավերը բավական դրական դեր են խաղում հասարակության նյութական բարեկեցության մեջ, մինչդեռ հետամնաց հայ վաճառականությունը անխնա հարստահարում է հայրենակիցներին ու երբեք չի հագենում: Դեռևս Թիֆլիսում ուսանելու շրջանում ապագա գրողի ուշադրությունը գրավել էին այդ խավի շահասիրությունը, բարքերի ապականությունը, ապազգային բնույթն ու օտարամոլությունը: Ռաֆֆին այդ առիթով իրավացիորեն նկատում է, որ «դեռ ոչ մի վիպասան ուշադրություն չէր դարձրել մի մռայլ դասակարգի վրա, որ խավարի մեջ կեղեքում է իր զոհերին»: Եվ ահա 1870-ականներին հիշյալ հիմնախնդիրը գեղարվեստական անդրադարձներ է գտնում «Զահրումար» (օձի թույն) և «Ոսկի աքաղաղ» վեպերում: Այս երկու գործերում գրողը դիմակազերծում է վաշխառուական խավի

տգիտությունն ու քար անտարբերությունը համազգային խնդիրների նկատմամբ և նրան հակադրում վաճառականության նոր սերնդին:

Ռաֆֆու ստեղծագործական կյանքի երկրորդ շրջանը համընկնում է 1877-78 թվականների ռուս-թուրքական պատերազմի հետևանքով ազգային--ազատագրական շարժումների խանդավառության ընթացքին: Հայ մամուլն ու հրապարակախոսությունը, չնչին բացառությամբ, ոգևորված էին ռուսական զենքի հաղթանակով և համոզված էին, որ Արևմտյան Հայաստանը շուտով կազատագրվի թուրքական լծից: Թերահավատների չնչին բացառության մեջ էր Ռաֆֆին: Պարոնյանի պես նա ևս առանձնապես չէր հավատում պատերազմի հետևանքով հայոց ազատագրմանը: Ընդհակառակը, իր «Դատարկ հույսերով ենք ապրում» հոդվածում վիպասանը կարծում էր՝ հայոց պատմության դառը փորձն ապացուցում է, որ հայերը միշտ էլ չարաչար խաբվել են, տուժել՝ իրենց հույսը դնելով այս կամ այն պետության վրա: «Հայը կռվողների ոտքերի տակ խոտի նման տրորվեցավ՝ առանց շոշափելի օգուտի,- գրում է Ռաֆֆին և եզրակացնում:- ...Ազատությունը տրվում է այն ազգերին, որոնք իրենց ազատությունը սրով պաշտպանել գիտեն: Առանց արյունի ազատություն չկա, որպես առանց զոհերի՝ փրկություն»: Այս տեսակետի գեղարվեստական մարմնավորումներն են ազատագրական շարժման թեմային նվիրված նրա քաղաքական-ծրագրային երեք գործերը՝ «Ջալալեդդին» վիպակն ու «Խենթը» և «Կայծեր» վեպերը: Սրանցից յուրաքանչյուրը գեղարվեստական ամբողջական պատկեր է, ուր ակնառու են ժողովրդի ազատագրության ուղիների մատնանշումների հեղինակային գաղափարական զարգացումները. եթե «Ջալալեդդին»-ում հեղինակը բռնությունից ազատագրվելու ելքը տեսնում է մի լավ կազմակերպված ավազակախմբի զինված պայքարի մեջ, ապա «Խենթ»-ում և հատկապես «Կայծեր»-ում նա առաջադրում է այն միտքը, որ օտար լուծը թոթափելու միակ ճանապարհը համազգային լավ նախապատրաստված պատերազմն է: Թումանյանի խոսքով՝ «հեղափոխական ծրագրեր հղացող» վիպասանն այդ ամենով «բորբոքում էր ազատության կռիվը»:

Այսպես՝ ինչպես հայ ամբողջ երիտասարդությունը, այնպես էլ ազատագրական շարժման գործիչ Ալեքսանդր Գոլոշյանը և Հովհաննես Թումանյանը գտնվում էին Ռաֆֆու գաղափարների ազդեցության տակ: «Կայծեր»-ի և Ռաֆֆու «կենդանի խոսքի» ներգործությանը պետք է վերագրել Գոլոշյանի և Թումանյանի անավարտ մնացած սխրանքը: 1888-ին՝ Ռաֆֆու մահվանից հետո, հայրենիքն ազատագրելու վիպասանի երազն իրականացնելու համար նրանք որոշում են գնալ ու զենքով փրկել Արևմտյան Հայաստանը: Այդ նպատակով դեռևս նոր նշանված 19-ամյա Հովհաննեսը վաճառում է իր ամառային վերարկուն և

ստացված գումարով զենք գնում: Սակայն 1888-ի հուլիսին, երբ Գոլոշյանի և երկու այլ հայրենասերների հետ պետք է ճանապարհվեր Արևմտյան Հայաստան, ծանր հիվանդությունը երկու ամիս շարունակ նրան գամում է անկողնուն. հիվանդությունը նախախնամության կամքով դառնում է բարեբախտություն հայ ժողովրդի ու գրականության համար, քանի որ մոտ գալիքի Ամենայն հայոց բանաստեղծը չի հասցնում առողջանալ ու միանալ Գոլոշյանին և մի ուրիշ հայրենասերին՝ Հովհաննես Ագրիպասյանին, որոնք սպանվում են Վան մեկնելու ճանապարհին:

Ռաֆֆին ազգային բարդ խնդիրների և հույսերի իրականացման ընթացքում բարձրացնում էր գեղարվեստական գրականության կշիռը, առաջադրում մտքեր՝ միշտ ապրելով ներկայով, անընդհատ աչքի առաջ ունենալով ազգի ապագան ու ժողովրդի գոյության հեռանկարները: Հայրենի ժողովրդի մեջ ազատագրական պայքարի կայծեր բորբոքելու և այն ահարկու հրդեհի վերածելու նպատակով նա իր վրա է վերցնում սերունդներին հայրենասիրական դասեր տալու ծանր բեռը. նրանց հայացքն ուղղում է դեպի սեփական փառապանծ պատմության հերոսական էջերը: Եվ ահա նրա ստեղծագործական կյանքի վերջին՝ երրորդ շրջանում, ծնվում են երեք նշանավոր պատմավեպեր՝ «Դավիթ Բեկ», «Պարույր Հայկազն» և «Սամվել», որոնք զուգահեռում են հեռավոր անցյալն ու ներկան: Դրանցից առաջինը նվիրված է 18-րդ դարասկզբի հայ ազատագրական շարժման իրադարձություններին, հայոց փառապանծ զորավար Դավիթ-Բեկին. նա, ղեկավարելով ժողովրդական շարժումը, վերականգնում պետականությունը Սյունիքում: Հայոց պատմության գլխավոր չարիքը Ռաֆֆին համարում է դավաճանությունը և ուրացությունը: Վեպում դավաճանների կերպարներից ամենաբնորոշը Մելիք-Ֆրանգյուլն է: «Ո՞վ չգիտե,- գրում է վիպասանը,- որ ամեն անգամ, երբ հայրենիքը վտանգի մեջ է գտնվել, միշտ գտնվել է մի հայ, մի վատ դավաճան, որ թշնամու ձեռքում գործիք է դարձել և հայրենիքը մատնել օտարի ձեռքը»: Ըստ հեղինակի՝ հայրենիքի դավաճանն արժանի է ամենախիստ պատժի: Վեպի համար լրացուցիչ նյութեր հավաքելու համար Ռաֆֆին Թիֆլիսից մեկնում է Սյունյաց աշխարհ: Նրան ուղեկցող մի գյուղացի ուսուցիչ հետագայում պատմում է, որ պատկառելի վիպասանը Մելիք-Ֆրանգյուլի գերեզմանի մասին արհամարհանքով նետում է հետևյալ խոսքը. «Դա մի կոպիտ քար է՝ իր հոգու պես սև, նզովքի ու ատելության կնիքը վրան... Մանուկներն անգամ ցույց են տալիս մատով ու թքում: Ահեղ է ժողովրդի դատաստանը ու անսասան՝ նրա դատավճիռը»:

Երկրորդ վեպը՝ «Պարույր Հայկազն»-ը, ընթերցողին տեղափոխում է հայոց

պատմության 5-րդ դար: Հեղինակն այստեղ հայտնում է այն համոզմունքը, որ հայ մարդու հիմնական առաքելությունը հայրենիքին անմնացորդ նվիրվելն է: Հենց այդպիսին է Քերթողահայրը, որի կերպարը Ռաֆֆին հակադրում է ամբողջ Հունաստանում հայտնի, բայց իրեն աշխարհի քաղաքացի համարող Պարույր Հայկազնին: Երբ երիտասարդ Խորենացին նրան հորդորում է գալ Հայաստան, լուսավորություն տարածել հայրենիքում՝ այդպիսով վերացնելով ժողովրդին սպառնացող մահացու վտանգը, հետևում է փառքից շլացած հռետորի ապշեցուցիչ պատասխանը. «Իմ հայրենիքն ամբողջ աշխարհն է, իսկ իմ հայրենակիցները՝ ամբողջ մարդկությունը»:

«ՍԱՄՎԵԼ» ՊԱՏՄԱՎԵՊԸ

«Սամվել»-ը հայ պատմավիպասանության գլուխգործոցներից է, նաև համաշխարհային գրականության կոթողային երկերից մեկը: Այս վեպը խորությամբ բացահայտեց Ռաֆֆու գիտական ու գեղագիտական ըմբռնումները, որոնք բացառիկ վարպետությամբ միահյուսվեցին գեղարվեստական պատկերի և բանաստեղծական ներշնչանքի հետ:

Պատմավեպն առանձին գրքով լույս տեսավ 1888-ի սկզբներին՝ հեղինակի մահից երկու ամիս առաջ: Այն բացառիկ սիրով ընդունվեց ընթերցողների կողմից, ոգևորեց հայ հանրությանն ու մանավանդ երիտասարդությանը: Նույն թվականին, օրինակ, իր ապագա կնոջ հետ առաջին ժամադրության ժամանակ Թումանյանն ուրախանում է, երբ Օլգան հպարտությամբ է նշում «Սամվել»-ը կարդացած լինելու մասին: Դեռևս երկու տարի առաջ Ռաֆֆու բնակարան այցելած 17-ամյա պատանի Հովհաննեսն արդեն տեսել էր, թե ինչպես է կյանքի վերջին տարիներն ապրող գրողը ոգևորված աշխատում իր «առաջ փռած «Սամվել»-ի վրա»: Այդ վեպի ազդեցությանը պետք է վերագրել, որ Թումանյանն իր առաջին զավակների անունները վերցրեց այնտեղից՝ Մուշեղ, Աշխեն, Նվարդ, Արտավազդ:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՆՔԸ ԵՎ ԴԻՊԱՇԱՐԸ

«Սամվել»-ն ունի բավական ինքնատիպ ***կառուցվածք***. բաղկացած է առաջաբանից, երեք գրքերից և «Փակագծի մեջ» միջանկյալ հատվածից: Այդ գրքերի բոլոր գլուխները կրում են դիպուկ վերնագրեր՝ երբեմն պատմական աղբյուր մատնանշող բնաբաններով:

Վեպի վերնագրից հետո դրված են 5-րդ դարի պատմիչներ Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու պատմություններից վերցված երկու ***բնաբաններ***, որոնցով Ռաֆֆին ավելի հավաստի է դարձնում ստեղծագործության պատմական հենքը: Ընդ որում՝ այդ բնաբաններից առաջինում է հիշատակվում **Սամվել** անունը, որը դարձել է վեպի **վերնագիր**՝ իբրև հայրենասիրության բացառիկ արարքի մարմնացում: Ահա այդ բնաբանները՝ աշխարհաբար թարգմանությամբ.

«Այնուհետև Վահան Մամիկոնյանը և Մերուժան Արծրունին՝ այս երկու պիղծ, անօրեն, դժնյա մարդիկ, որոնք ետ էին կացել աստվածապաշտության ուխտից և ուրացությամբ հանձն էին առել ու պաշտում էին մազդեզական անաստված կրոնը, սկսեցին Հայոց աշխարհում՝ բոլոր գավառներում՝ ամեն տեղ, ավերել եկեղեցիները, քրիստոնյաների աղոթքի տեղերը: ...Շատ տեղերում ատրուշաններ էին շինում, մարդկանց բռնի հնազանդեցնում էին մազդեզական կրոնին..., իրենց ազգականներին տալիս էին մազդեզական կրոն սովորելու: Ապա Վահանի մի որդին՝ ***Սամվել*** անունով, զարկեց, սպանեց իր հորը՝ Վահանին, և մորը՝ Որմիզդուխտին՝ պարսից Շապուհ թագավորի քրոջը» (**Փավստոս Բուզանդ**):

«Արշակի մահից հետո Շապուհը մեծ զորք գումարեց Մերուժանի ձեռքի տակ և ուղարկեց Հայաստան... Նրան կնության տվեց իր Որմիզդուխտ քրոջը... նրան խոստացավ տալ Հայոց թագավորությունը, եթե միայն նախարարներին հնազանդության բերի և մեր աշխարհը դարձնի մազդեզական կրոնին: Նա հանձն առավ ու եկավ... Նա ջանում էր խափանել քրիստոնեական բոլոր կարգերը... Ինչ գիրք որ գտնում էր, այրում էր և հրամայում էր հունարեն գրագիտություն չսովորել, այլ պարսկերեն, և ոչ ոք չհամարձակվի հունարեն խոսել կամ թարգմանել..., որովհետև այդ ժամանակ դեռ հայերեն գիր ու գրականություն չկար, և եկեղեցու կարգը կատարվում էր հունարենով» (**Մովսես Խորենացի**):

Թվում է՝ Ռաֆֆին վեպում միտումնավոր է խորթ մոր սպանությունը փոխարինել հարազատով՝ գեղագիտական իր իդեալն ավելի ընդգծելու համար: Բնավ. վիպասանը նաև խոշոր պատմաբան էր, մանրամասն ուսումնասիրել էր

հայ և օտար պատմագրությունը, և նրա աչքից չէին կարող վրիպել ո՛չ Մովսես Խորենացու Պատմության և ո՛չ էլ 10-րդ դարի պատմիչ Թովմա Արծրունու «Պատմություն Արծրունյաց տան» աշխատության մեջ Սամվելի մասին հիշատակությունները: 5-րդ դարում ապրած Քերթողահայրն իր երկի ***Երրորդ գրքի ԽԸ*** հատվածում ուղղակիորեն նշում է Սամվելի անունը՝ գրելով, որ նա ուրացության պատճառով սպանել է իր հորը և ***մորը՝ Տաճատուհուն***: Ահա նաև Թովմա Արծրունու անդրադարձը.

«Սակայն Մերուժանը չբավականացավ քրիստոնյաների և առավելապես մեր Հայաստան աշխարհի հանդեպ կատարած չարագործություններով, այլև Շապուհ արքայի հրամանով Վահան Մամիկոնյանի հետ վերցրեց պարսից զորքը և եկավ թագավորելու Հայաստանում: Առանց երկյուղի մտավ Հայոց աշխարհը, բայց չկարողացավ կատարել իր մտահղացումը, քանի որ Վահանի որդի Սամվելը դեմ գնաց հորը: Վահանը հույս ուներ որդուն թեքել դեպի գահավեժ կործանում: Նա առանձնացավ որդու՝ Սամվելի հետ՝ իբր թե խորհելու այն մասին, ինչի համար եկել էին: Երբ բավական հեռացան պարսից զորագնդերից, ***Սամվելը*** բարձրացրեց միասայրի սուրը ու խորունկ վերք հասցրեց նրան և անմիջապես զրկեց կյանքից: Ապա վերադարձավ այնտեղից և ***սպանեց նաև իր մորը՝ Տաճատուհուն***, որովհետև երկուսն էլ ուրացել էին Քրիստոսին»:

Ինչպես տեսնում ենք, նախ՝ Սամվելի անվան՝ Փավստոս Բուզանդի թռուցիկ ակնարկությունը միակ հիշատակությունը չէ հայ մատենագրության մեջ, և հետո՝ Ռաֆֆին առանց երկու աղբյուրները նշելու օգտագործում է գլխավոր հերոսի հարազատ մոր անունը և հենց նրան սպանելը:

Բայց և այնպես՝ հեղինակի համար վեպի նյութ է ծառայել հիմնականում Փավստոս Բուզանդի պատմությունը: Վիպական իրադարձությունների ու պատմական հիմքի համընկնումները վկայում են, որ այս պարագայում Ռաֆֆուն հատկապես հոգեհարազատ է եղել Փավստոս Բուզանդի աշխատությունը: Այս պատմիչը նրան գրավել է զեղումնալից պատմելաոճով, նկարագրվող դեպքերի դրամատիզմով, կենտրոնացված պետականության համար մղվող խանդավառ հայրենասիրությամբ և աշխատության մեջ ժողովրդական վիպասանության հարուստ արտացոլումներով:

Վեպի **առաջաբանը** իմաստալից է և ունի ծրագրային նշանակություն: «Պատմական վեպը մի ժողովրդի պատմական կյանքի նկարագիրն է,- այսպես է սկսում «Հառաջաբան»-ը Ռաֆֆին և շարունակում:- Նա պատկերացնում է յուր մեջ, թե որպես ապրել է և որպես գործել է մի ժողովուրդ, պատկերացնում է նրա բարքը, վարքը, սովորությունները, պատկերացնում է նրա մտա-

վոր ու բարոյական հատկությունները»: Գրողը, սակայն, գանգատվում է, որ հայ վիպասանին հայոց պատմությունը շատ քիչ բան է տալիս՝ անուններ, չոր ու ցամաք թվականներ, ներքին ու արտաքին պատերազմներ, լավ կամ վատ գործերի հիշատակություններ... Իսկ թե ինչպես էր կազմակերպված մարդկանց ընտանեկան կյանքը, ինչպիսին էին միջանձնային հարաբերությունները, ինչպիսի տներում էին ապրում, ինչպես էին հագնվում, այդ մասին պատմիչները գրեթե լռում են: Նրանք չեն նկատել, որ, բացի թագավորներից, իշխաններից ու հոգևորականներից, Հայաստանում կար նաև ժողովուրդ. պատմիչների համար գոյություն ունեին միայն տիրապետողներ: Ինչպե՞ս էր ապրում շինականը, ի՞նչ էր ուտում, ինչպե՞ս էր զվարճանում, ի՞նչ էր պատրաստում արհեստավորը, ո՞ր երկրների հետ էր առևտուր անում հայ վաճառականը, վերջապես ո՞ւր է «մեր ժողովրդի մի նշանավոր տարրը՝ կինը»՝ որպես ամուսին, մայր, ի՞նչ դեր էր կատարում ընտանիքում կամ հասարակության մեջ. ահա հարցեր, որոնց մասին լռում է պատմությունը, բայց որոնք էական են վեպի համար: Ուրեմն «հայոց դժբախտ վիպասանը ի՞նչ ունի,- հարցնում է Ռաֆֆին ու պատասխանում:- Նա պետք է ուժ տա յուր երևակայությանը, իսկ լոկ երևակայությունը մի ճիշտ պատմական վեպ նկարել չէ կարող»:

Իսկ ո՞րն էր ելքը: Գրողը չի հուսահատվել. խորապես գիտակցելով պատմավեպի դաստիարակիչ դերը, «մեծ կրթողական» ազդեցությունը սերունդների վրա (նախնյաց մեծագործություններին ու առաքինություններին հետևելու և արատներից ու սխալներից հեռու մնալու ձգտում)՝ նա առաջաբանում բացատրում է, թե ինչ աղբյուրներից է օգտվել: Իրեն օգնել են հայ և օտարազգի գրականությունը, բազմաթիվ ճանապարհորդությունները, որոնց ընթացքում ուսումնասիրել է նախնական ձևի մեջ պահպանված հայի ներկա կյանքը: Տակավին երիտասարդ՝ նա տեսել է հինավուրց գետնափոր խրճիթներ, մաշկապատ նավակներ և հասկացել, որ շատ բան չի փոխվել. «Հայաստանում դեռ մնացել են այնպիսի առանձնացած տեղեր, ուր ժողովուրդը դեռ ապրում է յուր վաղեմի ավանդական սովորություններով: Այդ տեղերը ես առիթ եմ ունեցել տեսնելու և նրանց կյանքը ուսումնասիրելու»: Եվ ահա նա, բացառիկ դիտողականությամբ, հազվագյուտ իրեր ու առարկաներ, զենքեր, դրամներ հայթայթելով, չգտածն էլ վերականգնելով իր շքեղ երևակայությամբ, ստեղծել է մի պատմավեպ, որից զգացվում են 4-րդ դարի հայոց պատմության շունչն ու բույրերը, շոշափելի են դառնում քաղաքական իրավիճակը, ժողովրդի հոգեբանությունն ու կյանքի իմաստը:

Վեպի հիմնական **թեման** 4-րդ դարի երկրորդ կեսին Հայաստանում

ծավալված խռովահույզ իրադարձություններն են: Հեղինակը **երեք գրքերում** գեղարվեստական տպավորիչ պատկերներով ներկայացնում է պատմական դեպքերի, գործողությունների ընթացքն ու զարգացումը, և աստիճանաբար ձևավորվում է հյուսվածքի բազմաճյուղ ու հարուստ **դիպաշարը**: Ի դեպ, դրա հիմքը ճանապարհի խորհուրդն է՝ սկսած երկու սուրհանդակների ուղուց մինչև Ողական ամրոց և այնտեղից Իշխանաց կղզի ու կրկին Ողական:

Առաջին գրքում պատկերվում է, թե ինչպես են Ողական ամրոց այցելած երկու սուրհանդակներից մեկի՝ Սուրենի բերած գույժն ալեկոծում Վահան Մամիկոնյանի 25-ամյա որդու՝ Սամվելի հոգին, իսկ մյուսինը՝ Ոսկանինը՝ փառավորեցնում Սամվելի մորը՝ Տաճատուհուն: Ընտրելով «կենդանի նամակի» դեր կատարող սուրհանդակի հաղորդած լուրի ու դրա թողած ցնցող ազդեցության ինքնատիպ միջոցը՝ հեղինակը բավական սեղմ, բայց գեղարվեստական ազդեցիկ պատկերներով ներկայացնում է ժամանակի հայ կյանքում տեղի ունեցող դրամատիկ իրադարձությունները: Պարսից Շապուհ Երկրորդ արքան խաբեությամբ իր մոտ՝ Տիզբոն էր հրավիրել հայոց թագավոր Արշակ Երկրորդին ու սպարապետ Վասակ Մամիկոնյանին: Նա Հայաստանը մեկընդմիշտ ծնկի բերելու նպատակով առաջինին անվերադարձ արգելափակել էր Անհուշ բերդում, իսկ երկրորդին կարգադրել էր մորթազերծ անել՝ մեջը խոտ լցրած պատմուճանով կանգնեցնելով թագավորի առաջ՝ իբրև հայոց ավերված տան խորհրդանիշ: Օգտվելով հայ նախարարական տների երկպառակություններից ու կենտրոնախույս ձգտումներից՝ Շապուհը ծանրակշիռ խոստումներով իր կողմն էր գրավել նախարարներ Մերուժան Արծրունուն և Վահան Մամիկոնյանին. փառասեր Մերուժանը հրապուրվել էր հայոց թագավորական գահով ու պարսից արքայից արքայի քրոջ՝ գեղանի Որմիզդուխտի սիրով, իսկ Վահանը՝ սպարապետության բարձր կոչմամբ:

Այս գրքի գլուխները հաջորդաբար ուրվագծում են զանազան բախումներ: Առաջինը քաղաքական է. դա միմյանց ատող երկու հզոր երկրների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև «որպես գայթակղության քար» ընկած Հայաստանն է: Շապուհը, ըստ վեպի հերոսներից մեկի՝ Մեսրոպ Մաշտոցի, ձգտում է «ընդմիշտ վճռել քաղաքական ծանր խնդիրը»՝ կրոնափոխության միջոցով հայերին ձուլելով պարսիկների հետ: Առկա են նաև հակասություններ նախարարական, այդ թվում՝ Ողական ամրոցում բնակվող Մամիկոնյան երեք տների միջև և բուն ընտանիքներում: Արդեն տարորոշվում են հայրենասերներն ու դավաճանները, առաջ են գալիս զանազան բանսարկուներ ու լրտեսներ, հայրենասեր ու պատվախնդիր հայորդիներ: Աստիճանաբար կերտվում են

այնպիսի կերպարներ, որոնց հեղինակը նախապատրաստում է հետագա գործողություններին ավել կամ պակաս մասնակցելուն. նրանցից են Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը, որոնք «Երեք երիտասարդ ուժեր» գլխում գիշերվա ջերմ վիճաբանությունների ընթացքում կամ հետո բնավ չէին կարող կռահել, որ քսաներեք տարի հետո «սկիզբ կդնեն հայոց մեծ լուսավորության ոսկյա դարին»: Առաջին գրքում հստակորեն երևում են նաև սպարապետական տոհմի արժանավոր հորեղբորորդիները՝ Սամվելն ու Մուշեղը՝ մեկը սեփական հոր ուրացությունից ու դավաճանությունից ամոթահար և նրան պատժելու «մի աղոտ մտքով» պարուրված, մյուսը՝ հոգեկան հոշոտումների մեջ, սակայն հավասարակշիռ ու հայրենյաց առողջ ուժերը կազմակերպելու մտորումներով համակված:

Առաջին գիրքն ավարտվում է Ողական ամրոցից եղբորորդիների մեկնումով. Սամվելը գնում է հորը դիմավորելու, իսկ Մուշեղը՝ կազմակերպելու երկրի պաշտպանական ուժերը և միանալու Արտագերս ամրոցում ամրացած հայոց Փառանձեմ թագուհուն:

Վեպի կառուցվածքում իմաստային կարևոր դեր ունի Առաջին գրքին անմիջապես հաջորդող «**Փակագծի մեջ**» արտադիպաշարային հատվածը: Սա գիտական համառոտ, բայց խոր վերլուծություն է, որտեղ Ռաֆֆին ներկայացնում է դարաշրջանի սոցիալ-քաղաքական ուժերի և կրոնական դավանանքների տարբեր բախումների հիմքերն ու պատկերները՝ սկսած հեթանոսական ժամանակներից մինչև քրիստոնեություն: Բուն դիպաշարից շեղված այդ տեղեկություններն ուժեղացնում են վեպի պատմական հավաստիությունը և ընթերցողին հստակ պատկերացում տալիս 4-րդ դարակեսերին հայ իրականության մեջ ստեղծված բարդ խնդիրների մասին:

Երկրորդ գիրքն ունի ներքին բաժանումներ՝ «Մեկը - Արևմուտքում, մյուսը - Արևելքում» («Պատմոս» և «Անուշ բերդ»), այնուհետև՝ «Ճանապարհները բաժանվում են» ընդհանուր գլուխ՝ իր հաջորդական ենթագլուխներով:

«Պատմոս» և «Անուշ բերդ» հատվածներում գործողությունները տեղափոխվում են նախ՝ Միջերկրական ծովում գտնվող Պատմոս կղզի, ապա՝ Պարսկաստանի Անհուշ բերդ: Արևմուտքում աքսորված էր Հայաստանի հոգևոր հովիվը՝ Ներսես Մեծը, իսկ Արևելքում՝ աշխարհիկ առաջնորդը՝ հայոց Արշակ թագավորը: Նրանք թեև շարունակաբար հիշատակվում են վիպական հյուսվածքում, սակայն իբրև գործող կերպարներ՝ հանդես են գալիս միայն այստեղ: Երկուսն էլ հոգեկան յուրատեսակ հոշոտումների մեջ են, երկուսն էլ մտովի հայրենիքում են՝ իրենց տարաբախտ հայրենակիցների մոտ:

Բուն Հայաստանում շարունակվում են դրամատիկ իրադարձությունները:

Պարսկական զորագնդերը դավաճան նախարարների առաջնորդությամբ, որոնց ուղեկցում էին պարսից զրադաշտական կրոնի սպասավորները՝ մոգերն ու մոգպետները, մտնում են Հայաստան: Վասպուրականի դարպասների մոտ նրանք, սակայն, հանդիպում են հայրենիքի միասնության գաղափարով տոգորված իշխանների և ժողովրդի լուրջ դիմադրությանն ու դուրս են շպրտվում երկրի սահմաններից: Իմանալով այդ մասին՝ մոլեգնած Շապուհն այս անգամ անձամբ է արշավանք սկսում դեպի Հայոց աշխարհ: Նրա զորագնդերը Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի զինակցությամբ մխրճվում են երկրի խորքերը՝ սփռելով մահ ու ավեր: Շապուհը, սակայն, չի կարողանում գրավել Արտագերս ամրոցը, քանի որ հանդիպում է սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի հերոսական դիմադրությանը: Դեպի Պարսկաստան քուշանների սկսած արշավանքն էլ իր հերթին հարկադրում է արյաց արքային հեռանալ Հայաստանից՝ դավաճան երկու նախարարներին հանձնարարելով պատերազմի շարունակության ղեկավարությունը:

Ոգևորված ծանր գնով ձեռք բերված հաղթանակով՝ Փառանձեմ թագուհին անխոհեմաբար շտապում է և Մուշեղ սպարապետին, հակառակ նրա ցանկության, ուղարկում է Բյուզանդիա՝ գահակալելու նպատակով այնտեղից բերելու պատանդ պահվող որդուն՝ Պապին: Վաղեսին փոխարինած Բյուզանդիայի հայամետ նորընծա կայսրը՝ Թեոդոսը, իր երկրի ներքին գործերով խիստ զբաղված լինելով, ցավոք, միայն ամիսներ հետո է կարողանում ընդունել հայոց պատգամավորությանը: Իսկ մինչ այդ Արտագերսում հանկարծահաս բռնկված մահաբեր ժանտախտից մահանում են գրեթե բոլորը. հրաշքով կենդանի են մնում թագուհին, պատանդ պահվող Շապուհի քույրերից մեկը՝ Որմիզդուխտը (Շապուհը ամուսնանալու համար նրան էր խոստացել Մերուժանին), և թագուհու երկու նաժիշտները: Եվ ահա Հայր մարդպետի՝ Դղակի մատնությամբ Մերուժան Արծրունու զորքը ներխուժում է Արտագերս, որտեղ արքայից արքայի քույրը ատելության խոսքեր է ասում դավաճանին և պահանջում իրեն ու հայոց թագուհուն անհապաղ տեղափոխել Տիզբոն: Ի դեպ, վիպասանը նրբամտորեն հարկ չի համարել պատկերել Փառանձեմի՝ պատմագրությունից հայտնի դաժան վախճանը Պարսկաստանում՝ դշխուհուն վերստին չվիրավորելու նպատակով. դա մնում է ենթատեքստում՝ հակադրության մեջ. Մուշեղ սպարապետը Շապուհի գերված կանանոցը վեհանձնորեն անվնաս ուղարկում է Տիզբոն՝ որպես մի շառաչուն ապտակ՝ ուղղված ստոր ու անսուրբ արքային:

Վեպի **երրորդ գրքում** արդեն հանգուցալուծվում են գործողությունները: Զավթիչների դեմ ուղղված հայոց ազատագրական պատերազմը նոր թափ է

ստանում. այն արդեն գլխավորում են Սամվելը, Վասպուրականի տիկինը՝ Մերուժանի մայրը, և հայրենասեր ուրիշ իշխաններ: Հորը տեսակցելու նպատակով Նախիջևանի մոտակայքում ամրացած թշնամու բանակ է այցելում Սամվելը: Վահանը կտրականապես մերժում է որդու սրտակեղեք խնդրանքը՝ հետ կանգնել դավաճանության ստոր ճանապարհից, և կատարվում է գուցեև անխուսափելին. «Արաքսի որոգայթները» գլխում որդին սպանում է դավաճան հորը: Ողական ամրոցում նույն ճակատագրին է արժանանում նաև ուրացող մայրը՝ Տաճատուհին:

Ռաֆֆին թեև չհասցրեց գրել «Սամվել» վեպի երկրորդ հատորը կամ այն մեզ չհասավ, այնուամենայնիվ պատմավեպն այս տեսքով էլ արդեն բավականին ավարտուն է. գլխավոր հերոսը՝ Սամվելը, ստեղծագործության վերջնամասում իր ճակատագրական արարքներով ամփոփում է վիպական հյուսվածքը, որն ավարտվում է հայ մարդկանց՝ «Արժանի՞ էր...» ուրախաձայն աղաղակով:

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

«Պատմական անցյալի և ժամանակակից դեպքերի մեջ կա մի զարմանալի նմանություն,- համոզված էր Ռաֆֆին:- «Սամվել»-ի կարդացողը կմտածի և անշուշտ կգտնի այդ նմանությունը, այն ժամանակ իմ գաղափարը հասկանալի կլինի նրան: Ես պատմական վեպը պատմական փաստերի համար չեմ գրում, այլ ինձ գրավող ժամանակակից շարժման համար»: Հիրավի, վիպասանը ժամանակակից խնդիրներ բարձրացնելու համար 4-րդ դարի երկրորդ կեսի դրամատիկ իրադարձությունները զուգահեռում է իր ապրած շրջանի՝ 19-րդ դարի 80-ականների ազգային և սոցիալ-քաղաքական ծայրահեղ վատ վիճակին՝ ցարիզմի վարած հայահալած, գաղութատիրական, ուրիշ խոսքով՝ սպիտակ ջարդի քաղաքականություն, հայկական դպրոցների արգելանք և այլն: Ազգակործան նման ծանրագույն խնդրի հայ ժողովուրդն արդեն բախվել էր դարեր առաջ, սակայն կարողացել էր դիմակայել դրան ու հաղթահարել աննախադեպ արհավիրքները: Այստեղից էլ՝ պատմավեպի **հիմնական գաղափարը**՝ հայրենասիրության շարունակական սերմանում հայ սերունդների հոգիներում, հայրենասիրություն, որին անհրաժեշտության դեպքում պետք է զոհաբերել անգամ անձնական երջանկությունը:

ՍԱՄՎԵԼԻ ԿԵՐՊԱՐԸ

Ռաֆֆին առաջնորդվում էր ռոմանտիզմի այն սկզբունքով, որ յուրաքանչյուր դեպքում հայրենիքի շահը պետք է վեր դասել անձնականից: Այդտեղից էլ վեպի

գլխավոր հերոսը՝ Սամվելը, դարձել է նրա գեղագիտական իդեալի հիմնական կրողը: Պատմագրության մեջ երիտասարդ Մամիկոնյան իշխանի մասին արված թռուցիկ, բայց գրողի ընկալմամբ նրա անսովոր ու գերբնական արարքն է դրվել ստեղծագործության կիզակետում՝ իմաստ և ուղղություն տալով պատումին: Սամվելի՝ սեփական հորն ու մորն սպանելու հոգեբանական անցումները ներկայացնելիս վիպասանը դրսևորել է հոգեվերլուծության ձիրք՝ խորապես մարդկային ու բնական վիճակները համոզչությամբ միացնելով ռոմանտիզմին բնորոշ արտասովորի տարրերին:

Երբ Սամվելն իմանում է հոր՝ Վահան Մամիկոնյանի և քեռու՝ Մերուժան Արծրունու դավաճանության մասին, ընկնում է խոր անհուսության մեջ. ««Մոգերով և մոգպետներով է գալիս իմ հայրը...»- մտածում էր նա խորին դառնությամբ,- «և յուր հետ բերում է, որպես օգնական, պարսից զորությունը... գալիս է ոչնչացնելու մեր եկեղեցիները, մեր դպրոցները, մեր դպրությունը... գալիս է պարսկացնելու մեզ... Նա գալիս է ձեռք ձեռքի տված Մերուժանի հետ... Թագավորությունը սպանեցին, այժմ պետք է սպանեն ազգությունը, կրոնը... Մենք այսուհետև պետք է պարսկերեն խոսենք և պարսկերեն աղոթենք... Եվ իմ հայրը մի այդպիսի եղեռնագործության պետք է մասնակից լինի՝ հավիտենական նզովք դնելով Մամիկոնյանների տոհմի վրա...»»: Որդին, սակայն, դեռևս չի մտածում հորն սպանելու մասին: Նրա հայացքի առջև հառնում է ոչ թե ինչ-որ սովորական դավաճան, այլ հարազատ հայրը, որին անհունորեն սիրում է և նույնքան սիրվում նրա կողմից: Մի միտք, սակայն, մի հեռավոր միտք, այնուամենայնիվ, սողոսկում է Սամվելի հոգին. «Մամիկոնյանը ծնում է դավաճաններ... Մամիկոնյանը ծնում է և հերոսներ... Երբ իմ հորեղբայր Վարդանը արքայազն Տիրիթի հետ ապստամբվեցան մեր Արշակ թագավորի դեմ և դիմեցին պարսից Շապուհ արքային,- դարձյալ իմ հորեղբայր Վասակն էր, որ գնաց նրանց ետևից և ճանապարհին բռնելով՝ սպանեց թե՛ Տիրիթին և թե՛ յուր եղբորը... Նրա ձեռքը չդողաց թափել յուր հարազատի արյունը, որ դավաճանում էր յուր թագավորին և յուր հայրենիքին... Իսկ ե՞ս...»: Սա աղոտ մի հիշողություն էր, գուցեև բարոյական արդարացման առաջին կասկածանք, որից անմիջապես հետո սարսռում է ծնողասեր զավակը, և նա դառնագին հեկեկում է. «Վերջին խոսքը արտասանելու միջոցին կարծես նրա շրթունքները կրակով այրեցին, նա չկարողացավ վերջացնել, կրկին ընկավ գահավորակի վրա և աչքերը բռնելով՝ սկսեց դառն կերպով հեկեկալ:- «Ա՜խ, հայր իմ... ա՜խ, հայր իմ...»- կրկնում էր նա, և արտասուքը հեղեղի նման թափվում էր աչքերից»:

Հեղինակը Սամվելին դիտավորյալ տանում է հենց այն ճամփաներով,

որտեղով արդեն անցել էին հայրն ու քեռին: Նա ամենուր տեսնում է ավերված շեներ, կործանված եկեղեցիներ, այրված մագաղաթներ և խոշտանգված մարդկանց... Ուրիշ խոսքով՝ ճանապարհին տեսած աղետները Սամվելի ներաշխարհում վերածվում են հոգեկան հոշոտումների ու ամրապնդում վրեժխնդրության մղձավանջը: Այս ամենին ավելանում են հայրենակիցներին ուղղված կրկնվող հարցումների սրտակեղեք պատասխանները.

«Սամվելը դարձյալ մնաց շփոթության մեջ:

- Ո՞վ ոչնչացրեց այդ բոլորը:

- Քո հայրը, տե՛ր իմ:

- Իմ հա՞յրը...- գոչեց որդին, և կարծես կայծակով շանթեցին նրա ճակատը»:

Բնորոշ է նաև մեկ ուրիշ դրվագ. Վանում Սամվելը ցնցվում է՝ տեսնելով բերդի պարիսպներից կախված Համազասպուհու՝ Աշխենի մոր ճերմակ, մերկ մարմինը.

«- Ո՞վ կախաղան հանեց:

- Վահան Մամիկոնյանը:

- Կայե՛ն...- բացականչեց խեղճ երիտասարդը՝ աչքերը բռնելով:- Նա սպանեց եղբորը, իսկ դու՝ քո քրոջը»:

Առաջին հայացքից թվում է՝ հայրասպանության «նախապատրաստության» հիմքերը դրվել են, մնում է միայն ավարտը: Ո՛չ: Ռաֆֆին սթափ արվեստագետ է, նուրբ հոգեբան. մինչև պատումի ցավալի ավարտը, անգամ վերջին վայրկյաններին որդին ծնողասպանության վճիռ բնավ չուներ: Հեղինակը «Արաքսի որոգայթները» գլխում է ներկայացնում հոր ու որդու հանդիպումը: Այն մի կողմից պարուրված է երկու հարազատների կարոտի ջերմությամբ, մյուս կողմից՝ ուրախության ու ցավի, դավաճանության, սիրո և ատելության իրարամերժ զգացմունքներով: Հոր նվիրած բացառիկ ընծան՝ «գեղեցիկ, ոսկեգույն նժույգը», չի մեղմում որդու տրտմությունը, հորն էլ սարսափեցնում են սիրելի որդու՝ «մահվան համար կռվելու», որսի ժամանակ վագրերի, առյուծների կամ հրեշների հանդիպելու ցանկությունները: Թվում է՝ նրանք մեղմ զրուցում են անմեղ բաների մասին, հետո այդ զրույցն աստիճանաբար վերածվում է քաղաքական վեճի. Սամվելը հասկանում է, որ հայրը հայրենիքին դավաճանել է Արշակունի արքայական տան նկատմամբ ունեցած ատելության զգացումից: Նրա հորդորները՝ ուղղված հորը՝ «ընդունի՛ր տառապյալ որդուդ աղաչանքը, մի՛ արատավորիր Մամիկոնյանների պայծառ անունը հավիտենական ամոթով, դեռ ուշ չէ, դեռ կարելի է վնասի կեսից ետ դառնալ», հանդիպում են ատելությունից կուրացած Վահանի կատաղի դիմադրությանը. Սամվելը հորն աղաչում է ճա-

կատագրական արարքից բառացիորեն ոոպեներ առաջ: Հայրը չի ընկրկում, ավելին՝ կատաղած հարցնում է, թե որդին որ կուսակցությանն է պատկանում, լսում է հայրենանվեր զավակի վճռորոշ պատասխանը. «Այն կուսակցությանը, որ հավատարիմ է մնացել հայրենի եկեղեցուն և սիրելի թագավորին»: Վահանը հրաժարվում է Սամվելին իր որդին համարելուց և սպառնում «անխնա պատժել»: Որդին էլ ստիպված հոր երեսին է շպրտում «դավաճան» անունը, և հայրը, վիրավորանքից դրդված, անմիջապես ձեռքը տանում է դեպի սուրը՝ պատրաստվելով սպանել Սամվելին: Որդին, սակայն, որսալով աղետի չափազանց մոտ լինելը, արդեն վեր էր պարզել սուրը. «Հայրը ձեռքը տարավ դեպի յուր սուրը: Բայց որդու սուրը արդեն մերկացած էր: Նա շողաց և կայծակի նման մխրճվեցավ հոր սրտի մեջ»:

Հոգեբանական նույն շիկացած անցումներն ենք տեսնում նաև մայրասպանության տեսարանում: Ակամա հայրասպան դարձած որդին, արդեն մի քանի ամիս տառապելով ջլախտով, վերադառնում է հայրենի ոստան՝ Ողական ամրոց: Մոր՝ Տաճատուհու պարսկասիրությունը վաղուց էր հայտնի նրան, և ինքն էլ իր հերթին կարծես հարմարվել էր դրան ու քամահրանքով էր վերաբերվում այդ «թուլություններին»: Բայց այն, ինչ տեսնում է Սամվելը բնօրրանում, արդեն վեր էր իր բոլոր երևակայություններից. Տաճատուհու հրամանով քանդվել էր հայոց սրբազան եկեղեցին ու վերածվել պարսկական ատրուշանի, մայրն էլ, շրջապատված բազմաթիվ մոգերով և մոգպետներով, կատարում էր մազդեզական «գարնանամուտի մեծահանդես տոնախմբությունը»: Ի՞նչ էր դա. մի՞թե իրականություն... Որդին խնդրում է հանգցնել պիղծ կրակը, բայց մայրը մնում է անդրդվելի և բարկությամբ պատասխանում, որ ինքն «աստվածասպան լինել չի կարող»: Դրան կրկին հետևում է որդու հաստատակամ պահանջը, սակայն ապարդյուն: Սամվելին լուռ, բայց հազիվ զսպված զայրույթով մորը պատժելու քայլին դրդում է նաև ժողովուրդը, և նա հոգեկան անլուր խռովքի մեջ բացականչում է.

«- Թող մարդիկ ինձ անիրավ կոչեն, թող մարդիկ ինձ եղեռնագործ կոչեն, ահա՛ այն սուրը, որ սպանեց դավաճան հորը, կսպանե և ուրացող մորը...»:

Նկատելի է, որ Սամվելը հորն սպանում է ճանապարհին. այն խորհրդանշում է նրա իսկ ծնողի ձեռքով ստեղծված արհավիրքների արյունոտ ուղին, որը հարկադրված էր անցնել հայ ժողովուրդը: Մորն էլ սպանում է քանդված եկեղեցու տեղում, իսկ եկեղեցին հայ քրիստոնյայի համար ընտանիքի կայունության ու ամուր հավատի մարմնացումն է: Մայրը ոչ միայն ինքն էր ուրացել սեփական կրոնը, այլև նման զազրելի արարքի էր դրդում անմեղ հայրենակիցներին: Այս

տեսակետից Սամվելի արարքը սեփական ժողովրդին յուրատեսակ փրկելու միջոց էր:

Այսպիսով՝ Մամիկոնյանները պակասում են մի դավաճանով և մի ուրացողով ու ավելանում մի հերոսով: Բայց այդ հերոսությունը ձեռք է բերվում անասելի ծանր գնով՝ ծնողասպանության զարհուրելի արարքով: Սամվելն ուներ այնպիսի բնավորություն, որ անպայման կուզեր ողջակեզ լինել, բայց չգնալ այդ քայլին. նա այդ մասին, գուցեև ենթագիտակցաբար, Իշխանաց կղզում որսի ժամանակ արդեն ակնարկել էր հորը. «Երանի՜ թե չար լինեի... երանի՜ թե եղեռնագործ լինեի... Գուցե ինձ ևս կվիճակվեր նույն օրհասը, որ վիճակվեցավ բարի Արտաշեսի չար որդուն... Թշվառ չարագործը կորավ, անհետացավ Արաքսի անդունդների մեջ, բայց հանգստանալ չկարողացավ... Մասիսի քաջքերը տարան, շղթայեցին նրան մի մթին այրի մեջ, ուր մինչև այսօր տանջվում է նա...»: Եվ եթե վիպասանը շարունակեր իր վեպը, հավանաբար կպատկերեր գլխավոր հերոսի հոգեկան հետագա տվայտանքները:

Վեպում Սամվելի կերպարը միակողմանի կլիներ, եթե հեղինակը նրան չներկայացներ նաև կենցաղում ու անձնական կյանքում: Ռաֆֆին կենդանագրում է հերոսի արտաքինը, հագուստներն ու զենքերը, ըստ նշանակության՝ բացառիկ զարդերը, նիստուկացը, միջանձնային հարաբերությունները սպասավոր-սպասուհիների, զանազան զարմիկ-զարմուհիների, հարազատ և խորթ մայրերի հետ: Այդ ամենը, ինչպես նաև թե՛ Ողական ամրոցի ներքին կյանքի և թե՛ առհասարակ իշխանական պալատների ու տարբեր արարողությունների նկարագրությունները ստեղծում են պատմական մթնոլորտ: Սամվելին սիրում էին շատ-շատերը, նաև հասարակ մարդիկ. չափազանց տպավորիչ է, երբ որսորդության պատրվակով Աշտիշատի վանք մեկնելու ճանապարհին նրան հանդիպող շինականները՝ կին թե տղամարդ, ծեր թե երեխա, անկեղծորեն ողջունում էին սիրելի իշխանին, նվերներ էին տալիս, իսկ գեղջկուհի կարմրաշապիկ աղջիկները հյուրասիրում էին իրենց պատրաստած բլիթներով ու քաղցրավենիքներով: Ո՞րն էր այդ սիրո գաղտնիքը: Սամվելը նման չէր նախարարական տների այն երիտասարդներին, որոնց «աչքում իրենց ազնվարյուն նժույգը, շունը, բազեն ավելի արժանավորություն ունեին, քան թե ռամիկը»: Ընդհակառակը, նա «բոլորի համար խոսք ուներ, բոլորին ողջունում էր և բոլորի առողջությունը հարցնում»:

Շատերն էին երազում գրավել Սամվելի սիրտը, բայց այն արդեն գերված էր. նա անհունորեն սիրում էր Ռշտունյաց իշխանադստերը՝ գեղանի Աշխենին: Չափազանց հուզիչ է նրանց հանդիպումը «վշտացած հայրապետի արտասուքներից գոյացած» Արտասուքի աղբյուրի մոտ: Սիրո փոխադարձ հավաստիաց-

ումներով և տխուր հանգամանքների բերումով անհրաժեշտաբար հայրենիքի շահն անձնական երջանկությունից վեր դասելու ազնիվ խոստումներով սիրահար զույգը բաժանվում է՝ նորից հանդիպելու ակնկալիքով. «Նրանք գրկվեցան: Երկար լուռ արտասուքը հեղեղի նման հոսում էր նրանց աչքերից, բայց անզոր էր շիջուցանելու (հանգցնելու) այրվող սրտերի կրակը: Երկար լուռ հեկեկանքը ալեկոծում էր նրանց, և «Արտասուքի աղբյուրը» յուր տխուր հառաչանքներով ձայնակից էր լինում նրանց դառն հառաչանքներին...»:

ՎԵՊԻ ՄՅՈՒՍ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ

Ռաֆֆին վարպետորեն է կերտել նաև վեպի մյուս կերպարներին: Թեև նրանցից ոմանք հանդես են գալիս միայն մեկ դրվագում, այնուամենայնիվ արվեստագետը կարողացել է կերտել վառ, կենդանի ու բնորոշ բնավորությամբ օժտված ամբողջական կերպարներ: Այդպիսին են, օրինակ, Ներսես Մեծը և Արշակ Երկրորդը, Համազասպուհին...

Վիպական հյուսվածքում **Ներսես Մեծը** պատկերվում է Պատմոս անմարդաբնակ կղզում, ուր մի խոնավ քարանձավում ապաստանել էր իր հավատարիմ սարկավագների՝ Տիրեի ու Ռոստոմի հետ: Որքան էլ երիտասարդներն աշխատում էին հոգ տանել սիրելի հովվապետին, մեկ է, վիճակն անմխիթարելի էր. ապրում և սնվում էին նախամարդու պես: Վիպասանը կարծես գեղանկարչի վրձնով է կերտել «մի ժամանակ մի ամբողջ աշխարհի լուսավորության արեգակի», իսկ այժմ «սգավոր աքսորյալի» դիմապատկերը. «Դա մի բարձրահասակ մարդ էր՝ պատկառելի դեմքով և խորին, վեհանձնական հայացքով: Փառավոր մորուքը, որի յուրաքանչյուր մազերը փայլում էին սև սաթի նման, ծածկում էին նրա հզոր կուրծքը: Աչքերի մեջ վառվում էր սրբազան կրակ»: Անգամ անհուսալի վիճակում՝ չէր վհատվում Ներսես Մեծը. հայացքը հառած ծովի հեռուներին՝ իր հաղթ բազուկներով հաստ գերանից լաստանավակ էր պատրաստում՝ օր առաջ հասնելու իր կարոտյալ հայրենիք: «Ապերա՛խտ Բյուզանդիոն,- բացականչում է նա ներքին վրդովմունքով,- քո վարմունքը աններելի կմնա իմ սրտում... Դու վատությամբ վարձատրեցիր իմ հայրենիքի մատուցած ծառայությունները... Քանի՛, քանի՛ անգամ մենք հեռացրինք քո գլխից պարսկական սոսկալի սուրը... քանի՛, քանի՛ անգամ ազատեցինք քեզ ամոթալի անկումից... Իմ հայրենիքը մի անխորտակելի վահանի պես միշտ պատսպարեց քեզ արևելյան խուժադուժների արշավանքներից...»:

Շատ ցավալի էր նաև **Արշակ Երկրորդի** վիճակը հրեշանման բերդում: Նա, «շղթայակապ Արտավազդի նման կաշկանդված, մռայլ, քարեղեն նկուղի մեջ» է. առջևն էլ դրված է սիրելի սպարապետի պաճուճապատանքը, այն էլ՝ արևելյան այնպիսի դաժանությամբ, որ ձեռքով չէր կարող դիպչել նրան և փոքր-ինչ սփոփվել: Հայոց թագավորն ստիպված էր դիմանալու հազար ու մի ստորացումների և ծաղրուծանակի: «Երկաթյա գառագղի» (գազաններ պահելու վանդակի) մեջ փակված առյուծի պես նա դեսուդեն էր ընկնում, մերթ դատապարտում էր իրեն ու արդարացնում, մերթ անիծում հզոր ու անկախ պետության փլուզման պատճառ անմիաբան և անհեռատես նախարարներին, մերթ էլ մտաբերում Շապուհի՝ պարսից արքաների ամենասուրբ երդման նշանը՝ «վարազագիր մատանիով աղ կնքելը», և հետո երդմնազանցությունը: Չափազանց տպավորիչ է հայոց արքայի ու իր երբեմնի դայակի՝ Դրաստամատի հետ անակնկալ հանդիպումը: Հայրենի եզերքից ստացած լուրերը (թագուհու և թագաժառանգի ողջ լինելը, Մուշեղի՝ սպարապետի պաշտոն ստանալը...) փոքր-ինչ մեղմում են Արշակ Երկրորդի տառապանքները. ուրեմն կորած չէ ամեն բան. կգա փրկությունը հայոց համար: Իսկ երբ Դրաստամատն ակնարկում է թագավորի փախուստը կազմակերպելու հնարավոր փորձի մասին, հետևում է Արշակ Երկրորդի իմաստուն պատասխանը. «Ես կմնամ այստեղ. ես կզոհեմ ինձ հայրենիքի խաղաղությանը: Թող իմ նախարարները հաշտվեն իմ որդու հետ: Նա նոր է նրանց համար և նրա հետ հին հաշիվներ չունեն: Իսկ ես այստեղ կաղոթեմ նրանց հաջողության համար և կսպասեմ աստուծո տնօրենությանը...»:

Հայրենասեր կնոջ մարմնացում է Ռշտունյաց տիկինը՝ **Համազասպուհին**՝ Աշխենի մայրը: Որպեսզի ծնկի բերի իշխանուհու ամուսնուն՝ Գարեգինին, նրա հորեղբայր Վահան Մամիկոնյանը համարձակ ու խելացի տիկնոջն արգելափակել է Վանի անառիկ ամրոցում: Օրհասական պահին նրան անսպասելիորեն այցելում է Վահանը և չարախնդում: Համազասպուհին սոսկումով տեսնում է քաղաքը լափող ահարկու հրդեհը: Քաջարի իշխանուհին, չվախենալով ոչնչից, դավաճան հորեղբոր երեսին է նետում պարսավանքի, անեծքի ու ատելության խոսքեր. «Ամո՛թ քեզ, Վահա՛ն, որ ամոթալի գործերով արատավորում ես Մամիկոնյանների պայծառ հիշատակը... Թո՛ղ այն օրը սև՛ լիներ, երբ դու աշխարհ եկար... Թո՛ղ քո մայրը քո փոխարեն մի կտոր քար ծնած լիներ և ոչ քեզ նման մի պատիժ ու պատուհաս Հայոց երկրի համար»: Այս ճշմարիտ խոսքերը չի ներում Վահան Մամիկոնյանը և հրամայում է զարմուհուն մերկանդամ կախաղան բարձրացնել Վանի միջնաբերդի աշտարակից:

Արիասիրտ այս կնոջ արժանավոր զավակն էր **Աշխենը**՝ Ռշտունյաց

իշխանադուստրը: Հետաքրքրական է, որ մինչև նրա բուն գործողությունների մեջ մտնելը վիպասանն արդեն նախապատրաստել, ավելին՝ գեղարվեստական մի յուրօրինակ հնարքի՝ հիշողությունների միջոցով կերտել էր նրա կերպարը: Որմիզդուխտ քույրերից ավագը, որը շատ էր հմայված Սամվելով և գուցե ներքուստ էլ սիրահարված էր նրան, իր դայակ Հումայիի հետ զրույցի ընթացքում հիշում է «ահարկու լեռների և մթին անտառների բախտավոր» դստերը՝ ոսկեգույն գիսակներով, լուսափայլ աչքերով ու աղեղնաձև հոնքերով գեղեցկուհուն՝ Աշխենին: Նա տարիներ առաջ արքունական մականախաղի (գավազաններով խաղի) ժամանակ հաղթեց Սամվելին ու արժանացավ հայոց դշխուհու առաջին մրցանակին: Հիշողությունների թելն աստիճանաբար հյուսում է Ռշտունյաց քաջասիրտ օրիորդի խրոխտ կերպարանքը. «Գեղեցիկ նժույգը՝ որպես մի օդագնաց թռչուն, ահագին ոստյուններ էր գործում, և քաջազնյա օրիորդի մականի ճարպիկ հարվածներով գնդակը սլանում էր մինչև ասպարեզի վերջը»: Աշխենը հենց այնտեղ տարավ փայլուն երկու մրցանակներ՝ մեկը՝ «ոսկեղեն գեղաքանդակ թասը», մյուսը՝ Սամվելի սիրտը:

Հայրենասեր հայուհիներից ամենաազդեցիկն ու ամենաամբողջականը թերևս **Վասպուրականի տիկնոջ**՝ Մերուժան Արծրունու մոր կերպարն է: Վեպում այս մեծ իշխանուհին հենց սկզբից պատկերվում է դրամատիկ ծանր վիճակում: Ռաֆֆին հոգեբանի նուրբ զգացողությամբ է ներկայացնում դավաճան որդուն դատապարտող, բայց և որդիական սիրով տառապող գորովագութ մոր հոգեկան տանջալի ապրումները: Որքան էլ սիրում է հարազատ որդուն, բայց և այնպես խոր հայրենասիրությամբ սնուցված սիրտը չի ներում նրան, ինչպես չի ներում ժողովուրդը հայրենիքն ասպատակող չարագործին. ոչ մի քաղաքացի դուրս չի գալիս տնից: Ծերունազարդ տիկինը թեև փոթորկված հոգով, բայց արտաքնապես զուսպ ու սառնասրտորեն կարգադրում է քաղաքապատին Հադամակերտում բարձրացնել սև դրոշակներ, հայրենական տունն էլ պատել սև պաստառներով՝ որպես սգո նշան:

«- Այ՛ն, Մերուժա՛ն,- փակ դռների հանդիպած որդուն դառնացած ասում է մայրը,- քո հայրենական տունը յուր դռները փակում է քո առջև, որովհետև դու քո սրտի դռները փակեցիր թե՛ աստուծո, թե՛ քո հայրենիքի և թե՛ քո խղճի առջև... Ուրացողը, ապստամբը չէ կարող մտնել այդ տունը, Մերուժա՛ն»:

Մայրը որդուն այնուհետև ցույց է տալիս վերադարձի ուղին՝ գնալ Մայր եկեղեցի, հաշտվել Հիսուս Քրիստոսի հետ, քավել մեղքերը, դառնալ չար ճանապարհից, քանի որ դա են պահանջում նրան դեռ սիրող մայրն ու ամբողջ Վասպուրականը, և այնժամ հայրենական տան դռները կբացվեն նրա առջև: Դավաճան

որդուն ուղղված մոր հորդոր-խնդրանքը, որը միաժամանակ մայր Հայաստանի ձայնն է, չափազանց բնական է, անկեղծ ու մարդկային և զերծ է ռոմանտիզմին հատուկ վերամբարձ ոճից ու ճարտասանությունից:

Դավաճանը մնում է անհողդողդ և շարունակում է հայրենիքի ասպատակությունն ու հայորդիների գերեվարությունը: Այս անգամ զորքով նրա դեմ է դուրս գալիս նաև հարազատ մայրը: «Նրա հետ են և՛ արագոտն մոկացիք, նրա հետ են և՛ երկայնաղեղ սասունցիք, նրա հետ են և՛ սարսափելի ռշտունցիք: Նրա հետ է և՛ մեր պաշտելի սուրբ Խաչի զորությունը»,- այսպիսի լուր են բերում մոր պատգամավորները Մերուժանին: «Ես հույս ունեի,- ասում է սգավոր մայրը մարտադաշտում գտնվող հայրենասեր իշխաններին,- որ իմ մոլորյալ որդին պատիվ կդներ մոր արտասուքին և կդառնար չար ճանապարհից: Այդ նպատակով ուղարկեցի նրա մոտ իմ պատգամավորներին: ...Բայց, ինչպես երևում է, ամեն մի զգացմունք՝ դեպի յուր ծնողը, դեպի յուր ազգն ու հայրենիքը, մեռած է նրա սրտում: Այդ պատճառով նա մեռած է և ինձ համար: Ես կցավեմ նրա վրա, բայց երբեք չեմ ափսոսա: Նա այլևս իմ որդին չէ: Իմ որդիքը, իմ սիրելի զավակներն են այն բազմաթիվ գերիները, որ այժմ շղթայակապ դրած են մեր առջև՝ պարսից բանակում»:

Այսքանից հետո, թվում է, մայրը պետք է որ վերջնականապես մեռած համարեր որդուն: Բայց վիպասանը շարունակում է նորանոր գծերով հարստացնել մոր կերպարը, թափանցել նրա սրտի անհունները: Մայրը մնում է մայր. մեծ իշխանուհին, երբ ռազմադաշտում նկատում է, որ որդին իր ձիուց վայր է ընկնում, կուրծքը ծեծելով վազում է դեպի մոլորյալ որդին՝ մղկտալով և աղաղակելով. «Անողո՛րմ, անգո՛ւթ մարդիկ»: Ի՞նչ կարող ես անել. այսպիսին է մայրական սերը՝ անբացատրելի, անսահման ու առեղծվածային...

Ռաֆֆին առհասարակ գեղարվեստական վառ կերպավորումներով է ներկայացրել կանանց. ահա նրանցից ոմանք՝ անուղղելի պարսկասեր ու պճնամոլ, փառասեր և գոռոզամիտ Մամիկոնյան տիկինը՝ Տաճատուհին, բացառիկ գեղեցկատես ու նրբամիտ, միաժամանակ առյուծասիրտ հայոց Փառանձեմ թագուհին, Որմիզդուխտ արքայաքույրերը՝ չքնաղ, հավերժ կանացի, Մոկաց կապուտաչ գեղեցկուհին՝ քաջասիրտ Սաթենիկը՝ Մուշեղ Մամիկոնյանի կինը, ամուսնուն հավատարիմ, բայց խանդից խոցված ու տառապող Վահանդուխտը՝ Մերուժանի կինը, ամոթխած օրիորդ Նվարդը՝ Սամվելի սպասավոր Հուսիկի ընտրյալը: Տպավորիչ է նաև Մուշեղ սպարապետի վեհանձն արարքից զարմացած ու նրան երախտագիտության խոսքեր ասող արյաց տիկնանց տիկնոջ կերպարը:

Վեպում հայրենասերների առաջամարտիկներից է **Մուշեղ Մամիկոնյանը**՝ եղերական վախճան ունեցած քաջ սպարապետ Վասակ Մամիկոնյանի որդին: Նրա կերպարում գլխավորը հերոսականությունն է, որը համահունչ է հայրենիքի ճակատագրով մտահոգ մյուս հերոսներին: Ռազմադաշտում նա ցուցաբերում է քաջության ու հնարամտության տպավորիչ արարքներ բազկի ուժի, ռազմավարության հմտության, արագ կողմնորոշվելու շնորհիվ: Վեհանձն սպարապետը իրեն երբեք թույլ չի տալիս «քնած մարդու վրա հարձակվելու»: Նա ասպետորեն է վարվում Շապուհի կանանոցի հետ (դրան հավանություն չի տալիս հայոց թագուհին) և արժանանում գոռոզ ու ապերախտ արքայի հրճվալից զարմանքին. նա Մուշեղի մեծահոգության հիշատակը հավերժացնելու համար իր ոսկյա բաժակի վրա նկարել է տալիս հայոց սպարապետի պատկերը՝ ճերմակ ձիու վրա նստած, և հանդիսավոր տոնախմբությունների ժամանակ հիշում է հերոսի ազնիվ արարքը՝ ամեն անգամ ասելով՝ «ճերմակ ձի նստողի փառքի համար»:

Մուշեղի կերպարի ամբողջականության համար վիպասանը նրան պատկերում է ընտանիքում ու կենցաղում. նա ընտանիքին նվիրված ամուսին է, սիրող, գորովագութ հայր:

Վեպի հաջողվածության գործոններից է նաև հեղինակի կողմից կատարվող կերպարավորման միջոցների բազմազանությունը: Թշնամի երկրի արքունիքում Մուշեղ Մամիկոնյանի մասին կարծիք ձևավորելու համար, օրինակ, Ռաֆֆին օգտագործում է նույն երկրի լրտեսի նամակը՝ իբրև կերպարակերտման միջոց. ահա ինչ է գրում Սամվելի խորթ մոր ներքինին Պարսկաստան ուղարկվելիք նամակում. «Մուշեղը... ունի փորձ և ընդարձակ հմտություններ պատերազմի գործերում: Դա մի սոսկալի մարդ է: Պարսկաստանը շատ կշահվի, եթե մի ամբողջ գավառ անգամ նշանակելու կլինի նրա կյանքի վճարման համար՝ որպես գլխագին: Մեծ է դրա ազդեցությունը թե՛ ազնվական և թե՛ հոգևոր դասակարգերի վրա: Լավ զորապետ և քաջ պատերազմող է և ոխերիմ թշնամի արիներին»:

Վեպում հաջողված են կերտված նաև, այսպես կոչված, հակահերոսները՝ **Շապուհը**, **Մերուժան Արծրունին** և **Վահան Մամիկոնյանը**: Նրանք երեքն էլ գեղարվեստական ամբողջական կերպարներ են: Պահպանելով հանդերձ խոր պատմականությունը՝ Ռաֆֆին նրանց պատկերել է կենդանի միջավայրում ու աշխույժ երկխոսություններում: Նրանց երեքին միավորողը քաղաքական ծանր խնդրի լուծումն է՝ հօգուտ Պարսկաստանի: Նրանք, սակայն, օժտված են խորապես տարբեր բնավորություններով:

Արդեն պատկառելի տարիքի հասած Շապուհն անհագ նվաճող է, անսուրբ

ու երախտամոռ արքա, որը հատկապես աչքի է ընկնում արևելյան ահասարսուռ դաժանությամբ:

Մերուժան Արծրունին համեմատաբար ուշ է երևում վիպական հյուսվածքում: Հակահայրենասիրական շարժման այս պարագլուխը կարծես իրարամերժ հատկանիշների զարմանալի հավաքածու լինի. գեղեցիկ է՝ «որպես մի արեգակ լուսապայծառ», բայց և ահարկու նույնիսկ հայրենի քաղաքի փողոցներն արշավելիս, հաստատակամ է, սակայն խոցելի («Իմ քաղաքացիները... ինձ մեռած են համարում»), սիրող ու հարգալից զավակ է, բայց և անառակ որդի, անողոք իր ընտանիքի հանդեպ, հայրենիքի դավաճան է, բայց և հայրենական տան փակ դռների առջև խեղճացած ու հեզ... Նա հայրենիքին դավաճանել էր սիրուց, որ տածում էր կրտսեր Որմիզդուխտի նկատմամբ: Ըստ վիպասանի հայեցակարգի՝ նա պետք է պատժվի: Հեղինակին, սակայն, չի հետաքրքրում նրա ֆիզիկական ոչնչացումը, և հյուսվածքում կարեվեր խոցված դավաճանի ճակատագիրը մնում է այդպես էլ անորոշ. նա ոչնչանում է բարոյապես. նախ հայրենական տան շեմին զգում է կյանքում ամենասարսափելին՝ մայրական սիրո փլուզումը, իսկ հոգեկան հոշոտումներն իրենց գագաթնակետին են հասնում, երբ իր սիրտը հափշտակած չքնաղ օրիորդից լսում է արհամարհանքի ու ատելության խոսքեր:

Վերջին հակահերոսը Մամիկոնյանների սպարապետական փառապանծ տան ամոթն է ու նախատինքը: Նա հարազատ երկրին դավաճանել է՝ քաղաքական նկատառումներից ելնելով. ատում է Արշակունիներին՝ համոզված, որ արքայական այդ տան վրա արյուն կա: Վահանը կարծում է, որ «Մերուժանը պետք է հայոց թագավոր դառնա պարսից գերիշխանության ներքո, մենք պետք է կրոնով միանանք պարսիկների հետ՝ մեր բարեկամությունը ավելի ամրացնելու համար», և մինչև վերջ պահպանում է իր այս ուխտը՝ դառնալով պատիժ ու պատուհաս Հայոց երկրի համար: Ռաֆֆին հավատարիմ է մնում պատմագրությանը, այսինքն՝ իրական փաստին, և վիպական հյուսվածքում նրան արժանացնում անողոք պատժի: Գեղագետ վիպասանը կերպարը կերտելու ընթացքում դարձյալ խուսափում է միակողմանիությունից և նրան օժտում է նաև դրական որոշ հատկանիշներով. Վահան Մամիկոնյանն անսահման սիրում է որդուն և խուսափում է նրա հետ ընդհարվելուց: Շարունակ տարված է նրա գեղեցիկ գալիքի երազանքով. մտածում է, որ Սամվելը «պարսկական արքունիքի զարդը պետք է լինի, իսկ Հայաստանի՝ փառքը»: Հոգեբանորեն համոզիչ ու ազդեցիկ է նրա նկատմամբ հոր ունեցած կասկածների պատկերը. իսկ եթե որդին իրեն հակառակ գնա: «Նա գտնվում էր այն ծանր, երկբայական դրության մեջ,- գրում

է հեղինակը,- որպես մի մարդ, որ սպասում է մահամերձ որդու մասին մի լուր: Ստանում է նամակը, բայց չի համարձակվում բաց անել: Նամակը կա՛մ պիտի ավետեր որդու առողջությունը, կա՛մ պիտի գուժեր նրա մահը: Ինչ կլիներ յուր դրությունը, եթե այս վերջինը պատահած լիներ»:

Տաղանդաշատ վիպասանի մասին հնչել ու այսօր էլ շարունակվում են լսվել հիացմունքի բազմաթիվ խոսքեր: Այդ ամենի մեջ, սակայն, ամենաբնորոշը Հովհաննես Թումանյանի խոսքն է. նա, հիշեցնելով մարդկանց հոգիներին դիմելու ճապոնացիների սովորությունը, մի անգամ այսպես է խոսել Ռաֆֆու հոգու հետ. «Անմահ՛ հոգի, որ, հայի բազմադարյան տառապանքով ու նրա լավ ապագայի կարոտով լցված, քո տաղանդի կախարդական ուժով դուրս կանչեցիր անցյալի մութից ու ապագայի անհայտությունից հրապուրիչ պատկերներ ու հերոսական դեմքեր ու նրանցով վառեցիր, ոգևորեցիր վիատներին ու տկարներին, համարձակություն ներշնչեցիր ու ղրկեցիր հզորների դեմ՝ նահատակության արյունով լվանալու և սրբելու ստրկության արտասուքը, որ անհանգստություն տվիր հայ ժողովրդի ոգուն և ուղղեցիր նրան դեպի ազատագրության ճանապարհը»:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ է Ռաֆֆին և գրական ո՞ր ուղղության ներկայացուցիչն է:
2. Կազմե՛ք սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության ուշագրավ փաստերը:
3. Ինչ ժանրերով է ստեղծագործել Ռաֆֆին:
4. Ո՞րն է «Սամվել» վեպի պատմական հիմքը:
5. Ներկայացրե՛ք Սամվելին՝ որպես պատմական անձնավորություն:
6. Բնագրում գտե՛ք և ներկայացրե՛ք ընթերցողի առաջին հանդիպումը Սամվելի հետ:
7. Ներկայացրե՛ք Սամվելի ներքին դրաման ու տագնապը: Մեկնաբանե՛ք նրա արարքների դրդապատճառները:
8. Բնագրից ելնելով՝ բացատրե՛ք որդու և ծնողների գաղափարական հակամարտությունը:
9. Ինչպե՞ս է յուրաքանչյուր հերոս հաղթահարում զգացմունքների պայքարը:
10. Հայրենիքի սերը և ծնողական-մարդկային ներքին զգացումը ինչպե՞ս է ավարտվում Սամվելի հոգեբանական պայքարում: Դուք ինչպե՞ս կվարվեիք:
11. Մեկնաբանե՛ք՝ նպատակային էր հոր և որդու երկխոսությունը: Ինչո՞ւ:
12. Արդյոք շողացող սուրը մաքրե՞ց փառավոր տոհմի անվան վրա դրված սև բիծը: Ինչպե՞ս:
13. Անվանի՛ր ստեղծագործության հերոսներից յուրաքանչյուրի արարքների դրդապատճառները (ինչո՞ւ նա այսպես վարվեց) և գնահատի՛ր նրանց վարքագիծը (անհատական աշխատանք):
14. Կազմե՛ք գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:
15. Ռաֆֆու ստեղծագործական կյանքը քանի՞ շրջանի է բաժանվում:

16. Թվարկեք յուրաքանչյուր շրջանում գրած ստեղծագործությունները և նշեք դրանց թեմատիկան:
17. Սամվելի ժողովրդականությունը ինչո՞վ է պայմանավորված: Ներկայացրեք ձեր դիրքորոշումը:
18. Սամվելի և Աշխենի հանդիպումը ինչո՞վ է խորհրդանշական:
19. Ներկայացրեք ձեր տեսակետը արյան մեջ թավալվող հոր և երկար ժամանակ անշարժ արձանի նման կանգնած Սամվելի հոգեկան ծանր դրամայի մասին: Արտահայտեք կարծիք:
20. Արդյոք պատճառաբանված է Սամվելի հետևյալ գործողությունը. «...այն սուրը, որ սպանեց դավաճան հորը, կսպանե և ուրացող մորը»:
21. Սամվելի հոգեբանական երկվությունը արագ լուծում է ստանում: Ըստ ձեզ՝ համոզի՞չ է այն: Արտահայտեք դիրքորոշում կատարվածի վերաբերյալ:
22. Մեկնաբանեք՝ ի՞նչ կերպ են արտահայտվում վեպում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը, բնագրի ասելիքի, ոճի, բառապաշարի, դիպաշարի, կոնֆլիկտի, կառուցվածքի առանձնահատկությունների վրա:
23. Քո նախընտրած հատվածում գտի՛ր և ներկայացրո՛ւ հեղինակի և գործող անձանց երկխոսությունները և մենախոսությունը: Բացատրի՛ր դրանց տարբերությունը :
24. Մեկնաբանի՛ր ստեղծագործության հերոսների զգայական վիճակը, գնահատի՛ր մարդկային հարաբերությունները, գեղեցիկ արարքները՝ բերելով բնագրային համապատասխան օրինակներ (անհատական աշխատանք):

Կերպար	Կերպարի արտաքին նկարագիրը	Ներկայացրո՛ւ կերպարի երեք վարքագիծ	Բնագրից ելնելով՝ բացատրի՛ր, թե ինչու նա այդպես վարվեց

25. Գնահատի՛ր Սամվելի և մյուս հերոսների վարքագիծը և արտահայտի՛ր քո վերաբերմունքը նրանց արարքների հանդեպ (անհատական աշխատանք):

Կերպար	**Վարքագիծ**	**Քո վերաբերմունքը**
Սամվել		

26. Դուրս գրեք ձեզ անհասկանալի պատմաբառերը և բառարանի օգնությամբ գրեք դրանց բացատրությունը:

Ռաֆֆի «Սամվել» պատմավեպը